# Ազգ

Azg

28 ՀՈՒՆԻՍ - 4 ՀՈՒԼԻՍ 2024 ՈՒՐԲԱԹ 023(5805)

ISSN: 1829-1651

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ


## Լրտեսական «Պեգասուս» ծրագրով հետեւել են 65-ից ավելի երկրում, նաեւ Հայաստանում

Գերմանաֆրանսիական arte հեռուստաընկերությունը նոր՝ 2023-ի արտադրության ֆիլմ է ներկայացրել 2021-ի հուլիսից աշխարհում լրատվական ցնցում առաջացրած իսրայելական «Պեգասուս» լրտեսական ծրագրի մասին, որ, ինչպես հայտնի դարձավ, վարակել էր նաեւ հայ հանրային գործիչներից մի քանիսի հեռախոսները: «Վաճառում ենք մեր ծրագիրը միայն այն պետություններին, որ պայքարում են ահաբեկչության եւ քրեական հանցագործության դեմ», հաղորդել էր «Պեգասուս» ծրագրի ընկերության ներկայացուցիչը՝ հաղորդելով, թե այն գնել են Ադրբեջանը, Մեքսիկան, Սաուդյան Արաբիան, Բահրեյնը, Մարոկկոն, Հունգարիան: Սակայն վավերագրությունը նկարագրում է, թե ավելի քան 65 երկրի լրագրողների, փաստաբանների, մարդու իրավունքների պաշտպանների, երկրի ղեկավարների ու նրանց հակառակորդների սմարթֆոններում աննկաս «հայտնվելով» ինչպես է գործել ծրագիրը, բարձրախոսի միջոցով օգտատիրոջը լսել, նույնիսկ՝ հետեւելով դիտել:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ, Գերմանիա

ՕՐԵՐԻ ՀԵՏ

## Ներոնիզմի ուրվականը Հայաստանում

Ո՞վ կարող է բացատրել, թե ո՞րն էր մեր երկրի շահը Պաղեստին պետությունը **Էրդողանի** միջնորդությամբ ճանաչելու գործում: Ի՞նչ կարիք կար թուրքական «բարեխոսությամբ» այդ բանը անելու, երբ Հայաստանը առաջին օրից եւ մշտապես, միջազգային բոլոր հարթակներում քվեարկել է հօգուտ պաղեստինցի ժողովրդի պետություն ունենալու իրավունքի եւ ի շահ Մահմուդ Աբբասի գլխավորած իշխանավարության: Ի՞նչ շահեցինք քաղաքական կրեդիտը ուրիշին, այս պարագայում՝ մեր արքիթշնամուն զիջելով, նրա կասկածելի խաղերի խաղալիքը դառնալով: **Նիկոլ Փաշինյանի** այդ քայլով, փաստորեն, ոչ թե շահեցինք, այլ՝ պրոարաբական մեր ուրույն դիրքի հետ կորցրեցինք նաեւ Հայկական Երուսաղեմի նկատմամբ իրական ոտնձգությունները զսպելու թերեւս մեր վերջին հնարավորությունը:

Ո՞վ կարող է բացատրել, թե ինչո՞ւ է Փաշինյանը Բելառուսի խելառ բռնապետի նկատմամբ առաջին օրվանից ունեցած իր հակակրանքը վերածել միջպետական հակամարտության եւ այն տարածել իր կողմից «սառեցված» ՀԱՊԿ-ի վրա: Կամ ընդհանրապես ի՞նչ իրավունքով է անձնականը խառնում պետականի հետ: Իրա՞վ, որ նա, Փաշինյանը, մեր մասնաբաժինը չվճարելով եւ Լուկաշենկոյի հետ կռվելով հույս ունի ՀԱՊԿ-ից դուրս բերել Հայաստանը՝ մնալով հանդերձ ԵԱՏՄ կազմում:

Ինչո՞վ բացատրել նրա ցանկությունը հանրաքվեով «համաժողովրդական» հայտ ներկայացնել անդամագրվելու Եվրոմիությանը: Իսկապե՞ս մտածում է, որ այնտեղ գրկաբաց կընդունեն մեզ, հարեւանների հետ լուրջ խնդիրներ ունեցող Հայաստանին: Գուցե մտածում է նաեւ ընդունվել ՆԱՏՕ: Միամի՞տ, թե՞ խելապակաս: Չեմ կարծում: Այլ ենթադրում եմ, որ այդ եւ նման հանրաքվեներով (Սահմանադրության խուզում, Ադրբեջան-Թուրքիայի հետ «խաղաղության» պայմանագիր եւ այլք), կազմակերպված եւ անցկացված ի՛ր իսկ կողմից, նա ձգտում է «համոզիչ» կերպով ցույց տալ, որ ինքն է «տերը մեր երկրի»:

Իսկ ինչո՞վ բացատրել Արցախ անունը լսելիս Փաշինյանի ընկնավորվելը՝ բառի փոխաբերական իմաստով: Ընդոծին ատելություն կա այս տղայի մոտ Արցախի եւ արցախահայության նկատմամբ: Այլապես ի՞նչին վերագրել Արցախի պետական ու ռազմական ղեկավարների պատանդառված վիճակի վերաբերյալ նրա քար-լռությունը: Տպավորություն է, որ ադրբեջանական բանտում նրանց նվաստացման մեջ մնալը Նիկոլի սրտով է, բայց, միաժամանակ, նրա սրտով չէ, որ նախագահ **Սամվել Շահրամանյանը** Երեւանում է, ողջ-առողջ, առավել եւս՝ որ նա Արցախի ներկայացուցչական տուն է մտնում, հանդիպում տարբեր մարդկանց, մասնավորապես՝ **Բագրատ Սրբազանի** հետ, լրագրողներ ընդունում, ասուլիս տալիս: Ավելի անհանդուրժելին՝ Շահրամանյանը ծառայողական մեքենա ունի եւ, պատկերացնո՞ւմ եք, վարորդ ու թիկնապահ: Կույր ատելություն բռնատեղահանված բոլոր արցախահայերի նկատմամբ, որոնք արդեն, հուրախություն իրեն եւ յուրայինների, քոչում են Մայր հայրենիքից:

Օրերս երեւան եկավ, որ Նիկոլը անբացատրելի ատելություն ունի նաեւ, ինչպես Արարատ սարի, Էրկրի, Հայոց պատմության, Հայ եկեղեցու, այնպես էլ հայկական քանդակագործության հրաշալիքի՝ խաչքարի նկատմամբ: Ատելավառ այդ ոգին հիշեցնում է Հին Աշխարհի ամենաքստմնելի դեմքերից մեկին՝ Ներոն կայսրին՝ Կլավդիոս կայսեր որդեգրին, որ կրակի տվեց Հռոմը՝ հրձիգության մեղքը գցելով քրիստոնյաների վրա:

Ի դեպ, նա սպանել էր տվել իր հարազատ մորը՝ Ագրիպինա կայսրուհուն եւ սեփական կնոջը:

Ի դեպ, 68 թ.ին Ներոնը ինքնասպան եղավ:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

## Ով է շտապում

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ




Հայաստանում կյանքը մանրից մտնում է արձակուրդային փուլ, մի քանի ընթացիկ քննարկում դեռեւս մի փոքր կենդանություն են տալիս քաղաքական կյանքին, եթե այդպիսին կա: Շուտով դուբայներ, կիպրոսներ եւ ֆլորենցիաներ կչվեն բոլորը՝ ե՛ւ հայրենիքի փրկիչները, ե՛ւ «իրական Հայաստան» կերտողները, ազգովին մի երկու ամիս կմնանք առանց փրկիչ եւ առանց հակափրկիչ, ի՞նչ ենք անելու՝ չգիտենք: Դե մեռնենք մի ուրիշ կարգի նրբիկ փրկիչ ու գործիչ են, հո **Ալիեւը** չեն, որ ամառ օրով արտահերթ ընտրություն է անում՝ աշնանը շարունակելու համար պինդ մեջքով իր նպատակների իրագործումը, այդ թվում՝ Հայաստանի հանդեպ իր անկուշտ ախորժակի նորանոր դրսեւորումների իրացումը:

Մյուս կողմից, այդպես ավելի լավ է միգուցե, քանի որ պատասխանատությունը, կեղծ թեմաները, որ տեսադաշտ էին փակում, սքողում բուն կատարվողն ու սպասվելիքը, գոնե ժամանակավոր դադար կառնեն, իրականության ռեալիստական պատկերը բացելով, որը մխիթարական չէ եւ ուղերձ ունի, որ ընդամենը երկու ամիս հետո կսկսվի բազմաթիվ զուգահեռ գործընթացներով այնպիսի բռունյան շարժում, որտեղ բազմաթիվ վտանգներ կլինեն Հայաստանի համար, իրար հաջորդելիք իրադարձությունները էլ չեն թողնի շունչ քաշենք:

⇨8

## «Ձեր բանտարկյալներին չեն տանջում այնպես, ինչպես ինձ էին տանջում՝ մահվան դուռը տանելով»

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

**Բոնն**

*«**Ազգ**»ի հունիսի 7-ի եւ 14-ի համարներում լուսաբանել ենք Բոննում հունիսի 3-13-ին ՄԱԿ-ի հովանու տակ անցկացվող Կլիմայի փոփոխություններին նվիրված համաժողովի մասին, (որ Բաքվում նոյեմբերի 11-24-ին գումարվելիք COP29-ի համաժողովի նախապատրաստական փուլն էր), ինչպես նաեւ անդրադարձել նույն վայրում հունիսի 3-ին եւ 7-ին Գերմանահայոց կենտրոնական խորհրդի կազմակերպած բողոքի ցույցին, որ առաջնահերթ պահանջ էր դարձրել Բաքվի բանտում գտնվող հայ ռազմագերիների շուտափույթ ազատարձակումը: Հայ ցուցարարների կողքին հունիսի 7-ին Բաքվում գումարվելիք համաժողովի դեմ փաստարկներ էին ներկայացնում*

*Ադրբեջանից վտարանդի մի քանի լրագրողներ, հրապարակում բարձրախոսն առած բողոքելով, թե Կլիմայի հարցերով համաժողովը հարստացնելու է միայն Ալիեւի ընտանիքին, ամրապնդելու է նրա ռեժիմը: Ադրբեջանցիների տաղավարը ցուցադրում էր Բաքվի բռնակալի՝ մի քանի տասնյակ հակառակորդների՝ բանտում կտտանքների ենթարկվող մարդու իրավունքների պաշտպանների, լրագրողների լուսանկարները: Շատ փաստարկված էր Շվեյցարիայի ափունքից Բոնն ժամանած **Էմին Հուսեյնովի** անգլերեն ելույթը, որ ճառախոսության ազդեցության մասին քաջատեղյակ, գիտեր մարդկանց տպավորելու, արդարության իր պահանջը բնապահպան մարդուն հասցնելու կերպը: Նրանից հետո ելույթ ունեցավ ադրբեջանցի վտարանդի լրագրող **Աբիդ Գաֆարովը**: Երբ ադրբեջանցիներն ավարտեցին ելույթները, մոտեցա: Էմին Հուսեյնովը ցույց տալով իրեն սպասող մի մեծ խմբի, ասաց՝ շտապում է, զրույցը ծավալեցի Աբիդ Գաֆարովի հետ: Բաքվում 1981-ին ծնված Գաֆարովը գերազանց գնահատականով է ավարտել դպրոցը, այնուհետ՝ Բաքվի պետական նավթարդյունաբերական համալսարանը: Ֆբ սոց հարթակում ներկայանում է որպես Կասպյան լրատվական կենտրոնի խմբագիր: Մեր զրույցում ասաց, թե Յութուբում ալիք է ունեցել, որի գույքը բանտարկությունից հետո 2022-ին բռնագրավել են: «Ձեր ազգանունը «ով» վերջածանցն ունի: Ադրբեջանակա՞ն է այն: Միգուցե ձեր ծնողները պատմել են, որ նրանք էթնիկ այլ խմբի են պատկանում՝ ուդի, լեզգի, թաթ...«Ես ճանաչում եմ իմ նախապապերին, մինչեւ 7-րդը (պորտը), կարող եմ ասել, որ բոլորը թուրք են եղել», ասաց Գաֆարովը: Մեր զրույցը երբեմն դադար էր առնում, քանի որ լսվում էր հայերի ձայնը՝ «Ալիեւին՝ Հաագա», «Ազատություն Բաքվի բանտերում գտնվող հայ ռազմագերիներին», ինչում էին Բաքվի բանտում գերյալ հայերի անունները...*

«Եթե կլիմայական արդարության մասին ենք խոսում, այն առանց համընդհանուր արդարության չի լինում», ասաց լրագրողը, երբ ներկայացա:

**-Իսկ համընդհանուր արդարության պահանջի մեջ հայերի, Լեռնային Ղարաբաղի, Արցախի մասին ինչո՞ւ չեք նշում: Չեք խոսում ցեղասպանության, Ալիեւի գործած ոճրի մասին: Խոսում եք միայն ձեր գերյալների մասին, չեք նշում, որ Ալիեւը բանտարկել է Արցախի ղեկավարներին, հայ ռազմագերիներ կան: Ինչո՞ւ եք խուսափում:**

-Խոսում ենք այս մարդկանց մասին, քանի որ նրանք որեւէ սխալ բան չեն արել: Նրանք ո՛չ զենք են կրել, ո՛չ թմրամիջոց են ունեցել, քրեորեն (հետապնդելի) որեւէ բան չեն արել: Բոլորը լրագրողներ են (ցույց է տալիս լուսանկարները-Ա.Հ.): Նրանք սոսկ ուզում էին խաղաղություն եւ ժողովրդավարություն բերել Ադրբեջան:

**-Կարո՞ղ է ժողովրդավարություն հաստատվել ձեր երկրում՝ առանց այդ հողի բնիկների՝ հայերի:**

-Պիտի սկզբում խաղաղություն լինի Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ:

**-Անշուշտ, բայց ինչպիսի՞ խաղաղություն:**

-Ադրբեջանում անկախ դատական համակարգ չկա: Լավ կլինի, որ ոչ միայն ձեր բանտարկյալների, այլ նաեւ բոլոր բանտարկյալների հարցը քննի միջազգային դատարանը: Միգուցե Հաագայում: Ինձ էլ են ձերբակալել, Ադրբեջանում արդարություն չկա: Ինձ տանջել են Բաքվի բանտում: Հավատացեք ինձ, ձեր բանտարկյալներին չեն տանջում այնպես, ինչպես ինձ էին տանջում՝ մահվան դուռը տանելով: Կլինիկական մահ եմ ապրել:

⇨8

ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

# Արհեստական բանականութիւն

Չեմ գիտեր, թէ մեր այս դարասկիզբը ի՞նչ անունով պէտք է կոչել՝ պատերազմներո՞ւ, վարակներո՞ւ, Գովիտի՞, կլիմայական փոփոխութիւններո՞ւ, թէ՞ գիտական հզօր զարգացումներու դարասկիզբ, մասնաւորաբար որ Արհեստական բանականութիւնը (AI- Artificial intelligence) սրարշաւ կ՛ընթանայ, մարդամեքենայի (ռոպոթ) ճամբով, որ արդէն անհաւատալի մակարդակներու հասած է: Այսօր, գիտութեան յառաջընթացը կը չափուիր ռոպոթներու զարգացման մակարդակներով: Արդէն սովորական դարձած է տեսնել տնային սպասեակի ներկայութիւնը հարուստ ընտանիքներու մօտ, որոնք իրենց հիւրերուն կը ցուցադրեն մարդամեքենային հրահանգներու ենթարկուիլը, հիւրերուն մատուցումներ, կամ տան մէջ որոշ աշխատանքներ կատարելու, հարցումներու պատասխանելու եւ այլն, զարմացնելով ներկաները, ի մեծ բաւականութիւն հարուստ տանտիրոջ:

Ասիկա անհատական օգտագործումն է, սակայն աւելի ընդարձակը ճարտարարուեստի մէջ է անոնց օգտագործումը՝ բժշկագիտութեան, տիեզերագնացութեան, ռազմական եւ այլ ոլորտներու:

Վերջերս, ամերիկեան շարժանկար մը դիտեցի, ուր գիտնական մը պատրաստած էր կանացի դէմքով երկու ռոպոթ, սիրուն դէմքերով, որոնց գլխու եւ մարմնի մնացեալ սարքուած բաժինները եթէ ծածկուին մազով ու հագուստով, ոչ մէկ տարբերութիւն իսկական կենդանի կիներէ: Գրաւիչ էին, խօսող ու արտայայտուող դիմաշարժերով, տրուած հարցումներուն շատ տրամաբանական պատասխաններով... եւ որ ամենակարեւորն էր, ոեւէ անհատի նման զգացումներ կը դրսեւորէին՝ ժպիտ, լրջութիւն, յուզում...: Գլխաւոր դերակատարուհին կը սիրէր, կը նախանձէր, վրիժառութեան կը դիմէր... Ըստ ֆիլմին, ուրեմն գիտութիւնը, կամ գիտնականը հասած են կատարեալ մարդ ստեղծելու մակարդակին՝ որ խելք ունի եւ բանականութիւն, զգացում եւ ապրում:

Դիտած վայրկեաններուս հիացական ժպիտս տեղի տուաւ ներքին սարսափի մը՝ ինչպէ՞ս կարելի է Աստուծոյ դեր խաղալ եւ մարդ ստեղծել... Նախ ըսեմ, թէ մարդը մարդամեքենայով փոխարինելը ինքնին աշխատող տարրին մեծ հարուած է, մեր ժամանակներուն մարդոց համար աշխատանք գտնելը դժուար եղած է, զանոնք մեքենայով փոխարինելը ինչպիսի՞ ահաւոր սխալ պիտի ըլլայ, անջատ այդ սարքերուն ապագային անակնկալ գործելաձեւերէն, որոնք նախատեսուած չեն: Մարդիկ չեն հասկնար, որ գիտութիւնը որքան ալ զարգանայ, բնութեան ստեղծածին փոխարէն նոր մը չի կրնար ստեղծել: Շրջան մը մարդուն նմանակը ստեղծեցին DNA-ը օգտագործելով (cloning), սակայն արդէն մոռացութեան տրուեցաւ՝ անպատեհութիւնները նկատի առնելով: Գիտութիւնը իսկական ծաղիկ մը իսկ ստեղծել չի կրնար, մնաց որ մա՞րդ ստեղծէ:

Մեծերը կ՛ըսեն՝ «Աստուծոյ գործին մի խառնուիր». Ապրիր կեանքդ ու փառք տուր Ստեղծողին: (Մօտս 4 տարիներէ ի վեր պահուած փոքր կարմիր պղպեղներու տնային բոյսի մը սերմերը ունէի,.անցեալ ամիս նկատեցի՝ որ թաղար մը ունիմ հողով լեցուն, բան մը ցանեմ ու զբաղիմ,- ըսի, գտայ պահած չորցած պղպեղները եւ մէջէն սերմերը հանեցի ու հողին մէջ մի քանի հատ թաղեցի ու սկսայ ամէն օր ջրել: Շաբաթ մը չանցած՝ արդէն ծիլ տուին այդ սերմերը եւ օրէ-օր հասակ նետեցին, չեմ կասկածիր որ կը ծաղկին, կը պտղաւորուին կանաչ, ապա կարմիր պղպեղներով, պահելով իրենց յատուկ կծու համը: Աստուած իմ, 4 տարի չոր ու ցամաք, եւ ահա՛ վերակենդանացում:

Աշխարհը թնդաց, երբ chip-ը ստեղծուեցաւ, այդքան փոքր սարքի մը մէջ անթիւ անհամար գիտելիքներ ու ինչեր ու ինչեր... անհաւատալի՛, հրաշալի՛... իսկ դուք նոյն զգացումը ունեցե՞ր էք գնդասեղի գլխիկին չափ փոքր սերմին մէջ կեանք ըլլալուն... Ինչ ուզէք կոչեցէք՝ աստուածային, թէ բնութեան հրաշք. (երանի բոյսին, հրաշալի իւրայատկութիւն մը, որ մարդուն եւ կենդանիին չէ շնորհուած):

Մէկ ռոպոթ պատրաստելու համար ի՞նչ միլիոններ կը ծախսուին, լաւ կ՛ըսեն, օգտակար է տեղին համեմատ, սակայն անոնց ցուցադրականներուն վրայ ծախսուածին չափ եթէ մարդկութեան վրայ ծախսուի, աշխարհը աւելի հանգիստ կ՛ըլլայ:

Վերադառնալով մեր նշած ֆիլմին, ըսեմ որ այդ գիտնականին պատրաստած երկու ռոպոթ կիները յարձակեցան իրենց արարիչին վրայ եւ սպաննեցին զայն, քանի որ չուզեցին այլեւս ենթարկուիլ անոր քմահաճ հրահանգներուն եւ նախընտրեցին ազատութիւնն ու անկախութիւնը:

# ՀԱՊԿ: Քննարկումների վեց երկար տարիներ առանց շոշափելի արդյունքի

ՍՈՒՐԵՆ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ
*Միջազգայնագետ, ԱՄՆ արտաքին քաղաքականության փորձագետ*

Վերջին օրերին Հայաստանում ամենաքննարկված թեմաներից մեկը, անտարակույս, վարչապետ **Նիկոլ Փաշինյանի** հայտարարությունն է՝ ուղղված Հավաքական Անվտանգության Պայմանագրի կազմակերպությանն ու Բելառուսի նախագահին: 2018-ի իշխանափոխությունից ի վեր հայկական լրատվամիջոցներում բազմաթիվ հոդվածներ են տպագրվել ՀՀ վարչապետի եւ Բելառուսի նախագահի միջեւ լարված հարաբերությունների մասին: Բելառուսը բացահայտ ցույց է տվել իր անվերապահ բարեկամական կապերը Ադրբեջանի հետ, որին նա ռազմավարական եւ տնտեսական առումներով շատ ավելի կարեւոր երկիր է համարում, քան՝ Հայաստանը: 2018-ից ի վեր ՀԱՊԿ-ն դարձել է Հայաստանի քաղաքականության եւ հատկապես արտաքին քաղաքականության կարեւորագույն թեմաներից մեկը:

Հայաստանն, առաջին հերթին, ՀԱՊԿ-ի դեմ արշավ նախաձեռնեց, երբ ետ կանչեց այդ կառույցում իր ներկայացուցչին՝ գեներալ **Յուրի Խաչատուրովին**, մեղադրական գործ հարուցելով նրա դեմ: Բայց չնայած Խաչատուրովը Երեւան վերադարձավ, դատական գործը այդպես էլ առաջ չգնաց, եւ նա համաձայն կազմակերպության կանոնադրության, շուտով կարողացավ վերականգնել իր պաշտոնը այդ կառույցում՝ այս անգամ որպես Բելառուսի գլխավոր քարտուղար:

Հայաստանի քայլը նշանակալի հարված համարվեց՝ ուղղված ՀԱՊԿ-ի հեղինակությանը, հատկապես որ Խաչատուրովը մեղավոր չէր ճանաչվել:

Մի քանի օր առաջ Փաշինյանը հայտարարեց, որ Հայաստանը դադարեցնելու է իր մասնակցությունը Բելառուսում կազմակերպված բոլոր միջոցառումներին եւ ոչ մի հայ պաշտոնական անձնավորություն Բելառուս ոտք չի դնելու, քանի դեռ այնտեղ նախագահում է **Ալեքսանդր Լուկաշենկոն**: Նման որոշումը կայացվել էր այն բանից հետո, երբ Լուկաշենկոն հաստատել էր պաշտոնապես, որ սատարել էր Ադրբեջանին 2020-ի պատերազմի ընթացքում եւ ողջունել վերջինիս հաղթանակը: Հայաստանը ետ կանչեց Մինսկում իր դեսպանին, միաժամանակ հասկացնելով Բելառուսին, որ, իր հերթին, նույն քայլին դիմի եւ խուսափի արձագանքել «ՀՀ վարչապետի հուզախառն ելույթներին»:

ՀՀ վարչապետը մի անգամ եւս հայտնեց, որ մտադիր է դուրս գալ ՀԱՊԿ-ից, հակառակ որ նախորդ օրը ՀՀ արտգործնախարարը հայտարարել էր, որ Հայաստանը նման մտադրություն չունի:

Կարեւոր է այստեղ նշել, որ համաձայն կանոնադրության, ՀԱՊԿկազմակերպության անդամները կարող են դուրս գալ այդ կառույցից նվազագույնը վեց ամիս առաջ՝ նախազգուշացնելուց հետո միայն: Մինչ օրս Հայաստանը նման բովանդակությամբ ոչ մի գրավոր հղում չի կատարել:

Բելառուսին բոյկոտելը կարող է ազդել նաեւ Եվրասիական տնտեսական միությունում Հայաստանի մասնակցության վրա, քանի որ հաջորդ տարի Բելառուսն է նախագահելու այդ կառույցի գործունեությունը: Սա նշանակում է, որ Հայաստանի ներկայացուցիչները բաց են թողնելու ԵԱՏՄ-ի նիստերը, ինչն էլ որոշում կայացնելու գործընթացին է խանգարելու, քանի որ այդ կառույցը հիմնականում գործում է «կոնսենսուսի»՝ ընդհանուրի համաձայնության հիման վրա:

Անշուշտ հնարավոր է, որ Հայաստանի ներկայացուցիչները հեռահար՝ առցանց ռեժիմով միանան նիստերին, խուսափելու համար հաղորդակցվելու ամբողջական խզումից: Հետեւաբար, բոյկոտը ինքնին դեռ չի նշանակում, որ Հայաստանը, առնվազն Բելառուսի նախագահության ժամանակահատվածում, խոչընդոտելու է ԵԱՏՄ-ի կամ ՀԱՊԿ-ի գործողությունները:

Արժե այստեղ հիշեցնել, որ 2024-ի մարտին հայ ղեկավար պաշտոնյաներ հանդիպումներ ունեցան Բելառուսի հայտնի ընդդիմադիր անձնավորություններից, քաղաքագետ եւ նախագահության թեկնածու **Սվետլանա Տիխանովսկայայի** հետ, որ լքել էր իր երկիրը վիճահարույց ընտրություններից անմիջապես հետո: Այս հանդիպումները դժգոհություն էին առաջացրել Բելառուսում, սակայն Մինսկը դրանց ըմբռնումով էր վերաբերվել, առանց հակադարձ ազդեցիկ գործողությունների: Նախագահ Լուկաշենկոն ընտրությունները համարում է հարմար առիթ հեղափոխություն իրականացնելու. հնարավոր մի սպառնալիք, որի խափանմանը միջոցներ չի խնայում Ռուսաստանը:

Ինչ վերաբերում է ՀԱՊԿ-ին, պետք է նշել, որ Փաշինյանի իշխանության ղեկը ստանձնելուց հետո դրա շուրջ ստեղծված իրավիճակը բավականին անորոշ է, քանի որ Հայաստանը բազմիցս սպառնացել է դուրս գալ այդ կազմակերպությունից, բայց վերջին վեց տարիների ընթացքում ոչ մի գործնական քայլ չի ձեռնարկել այդ ուղղությամբ:

*Անգլ. բնագրից թարգմանեց՝*
*ՀԱԿՈԲ ՇՈՒԼԻԿՅԱՆԸ*
**(The Arm. Mirror-Spectator)**

# Աղետի գոտին՝ աղետալի վիճակում

**Լոռվա ջրհեղեղից անցել է մեկ ամիս, բայց գիժ Դեբեդի ավերածության հետքերը դեռ ամենուր են: Ավերված ճանապարհների, կամուրջների փոխարեն նորերը չեն կառուցվել, աշխատանքներ տարվել կամ տարվում են այնքանով միայն, որ Մ6 միջպետական ճանապարհը միակողմանի եւ գրունտային վիճակով երթեւեկելի լինի: Այն, ի դեպ, Հայաստան-Վրաստան միջպետական ճանապարհ է: Ախթալայի կիսավեր կամուրջը, որ արտաքին աշխարհին է կապում նաեւ հարակից 6 համայնքերը, կիսով չափ դեռ եռակցված երկաթների հույսին է: 7 տոննայից ավելի ծանրության մեքենա՝ բեռնատար, դրա վրայով անցնել չի կարող: Ալավերդիի Սանահին կայարանի, Քարկոփի, Այրում կայարանի կամուրջներից հույս չկա: Այս համայնքերը դեռ հետիոտնային կամրջակների հույսին են:**

**Տիղմի եւ խոնավության հոտը դեռ աղետի գոտու՝ մոտ 40 համայնքների, բնակիչների քթում է: Ջրասույզ եղած տներում մարդիկ չեն ապրում: Գյուղացիները, որոնց այգիները եւս վարարած գետը քշել տարել է, շվարած մնացել են՝ ի՞նչ անել, ինչպե՞ս հետ բերել ջրի հետ հոսած-գնացած հողը, ծառերն ու բերքը:**

**Քարկոփ համայնքը, որ ամբողջությամբ էր ջրի տակ հայտնվել, բնակիչներն էլ տարհանվել էին, դեռ տիղմի ու ցեխի դեմ է պայքարում: Միակ բանը, որ մարդիկ կարողանում են «փրկել», պահածոյացված տարաներն են. սրբում են տիղմի շերտից ու նորից շարում դարակներում:**

**Աղետից կարճ ժամանակ անց վերականգնվեց երկաթուղու՝ ջրի տակ անցած հատվածն ու Հայաստանը գոնե այս կերպ կապվեց արտաքին աշխարհի հետ՝ առանց ընդհատումների: Բայց երկաթգծերի վերականգնումը ոչ թե մեր չքնաղագույն կառավարության շնորհքն էր, այլ այն սպասարկող «Ռուսական երկաթուղու»:**




**Իսկ ի՞նչ են արել այս ընթացքում պետական այրերն ու պատկան մարմինները աղետի հետեւանքները փոքր-ինչ մեղմելու համար: Ասել, թե ոչինչ չեն արել, սուտ կլինի. օպերատիվ շտաբի հիմնական «դերակատարները» (լոռեցու ասած՝ «մեյդան ընկածները»), փայլել են բլոգերի աշխատասիրությամբ: Նախ ռուսների արածը՝ երկաթգծերի վերականգնումը, իրենց են վերագրել, ապա իրար հերթ չտալով՝ տեսահոլովակներ հրապարակել, թե ինչպես են կռիվ տալիս ցեխի ու տիղմի հետ. լաքած կոշիկներով դրանց մեջ «քայլել են, քայլել են, քայլել»:**

**Ինչպե՞ս էին հասցնում աղետի առաջին իսկ օրվանից սկսած, երբ, թվում է, անգամ քիթ սրբելու ժամանակ չպետք է ունենային, դրոն թռցնել, վերեւից նկարել իրենց, ապա այդ ամենը մոնտաժել, տակն էլ գոռվարդանյանական երաժշտություն դնել եւ հրապարակել՝ մարդկանց աչքին թոզ փչելով, թե «վայ-ամեն» աշխատում են:**

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

# Հայաստանը ճանաչեց Պաղեստին պետությունը

## Ի՞նչ շահեց Թուրքիան

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ





Միջազգային մամուլն այս օրերին ակտիվորեն քննարկում է Արաբական երկրների կողմից որպես «խիզախ ու նշանակալի» քայլ գնահատված Պաղեստինի պետությունը պաշտոնապես ճանաչելու վերաբերյալ Երեւանի որոշումը:

Երեւանի այդ քայլին անմիջապես արձագանքել է Թուրքիայի ԱԳՆ-ն եւ ողջունել Հայաստանի որոշումը. «Մենք ուրախ ենք, որ Հայաստանը, հետեւելով Իսպանիայի, Իռլանդիայի, Նորվեգիայի եւ Սլովենիայի օրինակին, որոշել է ճանաչել Պաղեստին պետությունը»,- ասված է Թուրքիայի ԱԳՆ հայտարարության մեջ:

Հայտարարության մեջ նաեւ նշված է, որ Թուրքիան կշարունակի ջանքեր գործադրել, որպեսզի ավելի շատ երկրներ ճանաչեն Պաղեստինը:

Վերլուծաբանների ուշադրությունից չի վրիպել հատկապես այն հանգամանքը, որ ՀՀ ԱԳՆ-ն այս որոշման մասին հայտարարել է **Փաշինյան-Էրդողան** հեռախոսազրույցից մեկ օր անց: Հիմնազուրկ չէ այն ենթադրությունը, որ Պաղեստին պետության ճանաչման հարցը քննարկվել է Փաշինյան-Էրդողան հեռախոսազրույցի ժամանակ, եւ ըստ ամենայնի, Թուրքիան «հորդորել է» Հայաստանին գնալ այդ քայլին:

Հայաստանի որոշմանն արձագանքել է նաեւ իսրայելական կողմը: *«The Times of Israel»* կայքի փոխանցմամբ, Թել Ավիվը քննարկում է Պաղեստին պետության ճանաչման արշավին միացած երկրներին ըստ արժանվույն արձագանքելու եղանակը, եւ տվյալ երկրների հետ հարաբերությունների մակարդակը նվազեցնելու առաջարկությամբ է հանդես եկել:

Կայքում նշված է նաեւ, որ Պաղեստինի պետությունը ճանաչելու մասին Երեւանի հայտարարությունից հետ, Իսրայելի ԱԳՆ-ում խիստ նկատողություն է արել Թել Ավիվում Հայաստանի դեսպան **Արման Հակոբյանին**: Այդ տեղեկատվությունը, սակայն, չի հաստատվել Հայաստանի արտգործնախարարության կողմից:

Անշուշտ, Հայաստանի ընդունած որոշումը ողջունելի է, եւ կարիք չկա մտահոգվել, որ արդեն իսկ ոչ բարեկամական որակում ստացած Հայաստան-Իսրայել հարաբերությունները կարող են տուժել:

Բոլորին է հայտնի նաեւ Արցախյան երկրորդ պատերազմի ավարտը կանխորոշած Թել Ավիվ-Բաքու ռազմական համագործակցության վճռորոշ դերը:

Այստեղ ուշագրավը, սակայն, Հայաստանի կողմից Պաղեստինի ճանաչման գործում Թուրքիայի շահագրգռվածությունն է: Չէ՞ որ Թուրքիան միջազգային հանրությանը ներկայանում է որպես Իսրայելի ոխերիմ թշնամի, բայց մշտապես ստանձնել ու ստանձնում է Իսրայելի պաշտպանի դերակատարությունը` անկախ նրանից, թե ո՞ր քաղաքական ուժն է իշխում Թուրքիայում: Այլ կերպ ասած` Թուրքիան խոսքով Իսրայելի ամենամեծ թշնամին է, իսկ գործնականում` ամենամոտ գործընկերը: Անգամ Իսրայելին աջակցելու հարցում Թուրքիան երբեմն ԱՄՆ-ից էլ է առաջ անցնում: Փորձագետների պատկերավոր գնահատումով, վերջին 70 տարիներին Իսրայելը ՆԱՏՕ-ի հետ միասին` ԱՄՆ-ի գլխավորությամբ հետեւողականորեն նվաճել է Թուրքիան:

Իսրայելին աջակցելու հարցում Թուրքիայի ձեռնարկումները չեն սահմանափակվում միայն Պաղեստինի աշխարհագրությամբ: Էրդողանի կառավարության որդեգրած քաղաքականության հետեւանքով Սիրիան նույնպես վերածվել է ահաբեկչական գործողությունների թատերաբեմի, ինչը նպատակ էր հետապնդում հյուսիսային սահմաններում ապահովել Իսրայելի անդորրը:

Միջամտելով Իրաքի ներքին գործերին` Թուրքիային նաեւ հաջողվեց, հօգուտ Իսրայելի Իրաքը վերածել թրաֆիքինգի կենտրոնի, որն Արեւմտյան երկրների, այդ թվում` Իսրայելի համար պիտի վերածվեր էժան աշխատուժի ու էներգետիկ ռեսուրսների շուկայի:

Իսրայելն իր գոյության ողջ ընթացքում մշտապես պայքարել է իր մուսուլման եւ արաբ հարեւանների հետ հարաբերություններ հաստատելու ուղղությամբ: Դրա օրինակներից է Էմիրությունների ու Բահրեյնի հետ Թել Ավիվի հարաբերությունների կարգավորումը, ինչը տեղի ունեցավ ԱՄՆ նախկին նախագահ **Դոնալդ Թրամփի** ջանքերով: Մինչ այդ էլ, Թել Ավիվին հաջողվել է կարգավորել հարաբերությունները Հորդանանի ու Եգիպտոսի հետ:

Ակնհայտ է, որ Իսրայելին պատժամիջոցների ենթարկելու մասին Թուրքիայի վերջերս հրապարակած հայտարարությունը կեղծ էր, որի մասին իր փաստարկներն է ներկայացրել իրանական «Մաշրեղ» օրաթերթը, նշելով, որ Թուրքիան շարունակում է ողջ ծավալով մատակարարել Իսրայելին անհրաժեշտ սարքավորումները:

Նաեւ նշված է, որ Էրդողանի հետ փոխկապակցված անձինք նախկինում ակտիվորեն ներգրավված են եղել 2012 թվականի սիրիական ճգնաժամի ժամանակ Սիրիայի ու Իրաքի նավթի կողոպուտին: Իրանական կայքի կարծիքով, զարմանալ պետք չէ, եթե Թուրքիան Իսրայելին փրկելու համար ստիպված լինի Իրանին պատերազմ հայտարարել: «Էրդողանն անգամ հանուն Իսրայելի, պատրաստ է ողջ Թուրքիայի ժողովրդին զոհաբերել», -նշված է իրանական օրաթերթում:

Թուրք լրագրող **Մեթին Ջիհանն** էլ հրապարակել է Գազայի պատերազմից սկսյալ Թուրքիայից դեպի Իսրայել բեռնափոխադրումներ իրականացնող 260 բեռնատար նավերի ցանկը: Լրագրողը, որպես պարզաբանում հավելել է, որ Թուրքիան միջին հաշվով օրական 7 նավ է ուղարկում Իսրայել: Նա բացահայտել է, որ տվյալ պահին Իսրայելի Հայֆա նավահանգստում կայանած նավը պատկանում է Թուրքիայի իշխող կուսակցությունից տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցած **Իբրահիմ Գյուլերին**: Ջիհանը նաեւ նշել է, որ Թուրքիան առերեւույթ ձեւացնում է, որ դեմ է Գազայի ցեղասպանությանը, սակայն Իսրայելին լոգիստիկ ծառայություններ է մատուցում:

Թուրքական մեդիայում շրջանառվող տեղեկությունների համաձայն, իր աղմկահարույց բացահայտումներով հայտնի լրագրող Մեթին Ջիհանը սոցիալական ցանցում կատարած գրառմամբ տեղեկացրել է, որ Էրդողանի որդուն` **Բուրաք Էրդողանի** ընկերությանը պատկանող նավը բեռնափոխադրումներր է իրականացնում Իսրայելից:

Այնուամենայնիվ, Իսրայելի նկատմամբ առանձնահատուկ վերաբերմունք ունեցող Թուրքիան, Հայաստանին Պաղեստինի ճանաչմանը դրդելով, ի՞նչ նպատակ էր հետապնդում:

Թերեւս Իսրայելին աջակցելու հարցում Թուրքիան մտադիր է իր քաղաքականության աշխարհագրությունը տարածել նաեւ հարավկովկասյան տարածաշրջանի վրա:

Բանն այն է, որ Խորհրդային Միության փլուզումից հետո Ռուսաստանի Դաշնության շուրջ ձեւավորված եւ քաղաքական, տնտեսական միություններին անդամագրվելու բերումով Մոսկվայի ազդեցության տիրույթում հայտնված միջինասիական ու հարավկովկասյան հանրապետությունները, բացառությամբ Հայաստանի, նախորդ դարի 90-ականներին Մոսկվայի թելադրանքով ճանաչել էին Պաղեստին պետության փաստը:

Անկախացումից ի վեր Հայաստանի օրակարգային խնդիրներից էր արաբական աշխարհի ու Իրանի հետ հարաբերությունների առավել խորացումն ու միաժամանակ հայ-իսրայելական հարաբերությունների` բնականոն ընթացքի ապահովումը:

Այդ առումով, Հայաստանի անկախացումից հետո Պաղեստինի ճանաչման հարցում Երեւանի առանձնահատուկ եւ զգուշավոր մոտեցումը պայմանավորված էր Մոսկվայի կամքից անկախ` ազգային շահերի վրա հիմնված Հայաստանի վարած քաղաքականությամբ, որը հետագայում ստացել էր «կոմպլեմենտար» կամ «փոխլրացման» քաղաքականություն անվանումը:

Հայաստանի համար աշխարհաքաղաքական վեկտորների հստակեցման այս պատասխանատու եւ վճռորոշ ժամանակահատվածում, Պաղեստինի ճանաչման բեռը Երեւանի ուսերին դնելով, Անկարան ի ցույց է դնում Հայաստանի արտաքին քաղաքականության օրակարգի ձեւավորման հարցում իր բացառիկ դերը, ինչպես նաեւ Ռուսաստանի երբեմնի դերակատարության բացակայության իրողությունը, ինչը միանգամայն տեղավորվում է Ռուսաստանի նկատմամբ Արեւմուտքի, այդ թվում նաեւ` Իսրայելի վարած քաղաքականության տրամաբանության մեջ:

## Իմաստաբանական բառարան

### Գովք ծերության

Ծերության գովքն անելու պատճառները շատ են: Ծերանալը, նախ երկար ապրելու եւ երկարակյաց ընտրյալների շարքին դասվելու միակ միջոցն է: Ուստի ծերությունից խուսափել, նշանակում է հրաժարվել անցյալը փորփրելու եւ եզրահանգումներ անելու համար նախատեսված կյանքի կարեւորագույն հատվածից:

Իր ապրած 79 տարիների ընթացքում ծերության խորիմաստությունն ընկալած **Համո Սահյանը** երկարակյաց ընտրյալների շարքին դասվելու ցանկությունը մտքում փայփայելով` դիմել է Նորին Գերազանցություն ժամանակին ու խնդրել`

***Առ քո թեւերին, տար ինձ, ժամանակ,***
***Ես ես մնալուց շատ եմ վախենում:***

Ողբերգական մահվան հետեւանքով երկարակյաց ընտրյալների շարքը չհամալրած **Պարույր Սեւակի** անկատար երազանքն էլ ծերանալու բախտին արժանանալն էր`

***Ես կուզեի հիմա լինել ծեր ու տկար,***
***Ապավինած միայն անցյալների հուշին,***

Ծերությանը ձգտելու մասին կարող է վկայել նաեւ ծերակույտին, կամ ինչպես ասում են` պառլամենտների վերին պալատին անդամակցելու պատվին արժանանալն ու ազնվականությանը ձգտելու հեռանկարը:

Բացի այդ, ամենապատվաբեր ածականներից է «իմաստուն» որակումը, որը կարծես հատուկ ստեղծվել է «ծերություն» գոյականի համար:

«Ծեր» բառից նաեւ կարծես «հնության» ու «փորձառության» հոտ է գալիս»: Չէ՞ որ ծերն ու հինը, «ծերն» ու «փորձառությունը» գրեթե հոմանիշներ են: Տարբեր լեզուներում «ծեր» բառի հոմանիշների շարքը լրացնող «հին» բառը դրա մասին են վկայում:

Դրա մասին է վկայում նաեւ հնդեվրոպական նախալեզվի ger «ծերություն» արմատից հայերենին անցած բնիկ հայկական «ծեր» բառի ծագումը, որի մյուս ժառանգներից է սանսկրիտերեն «հին» իմաստով jar հոմանիշը:

Ինչպես «ծեր», այնպես էլ` «հին» հոմանիշի արժանիքների մասին են վկայում նաեւ «հին ընկերները չեն դավաճանում», «հնից լավը չկա», «ամեն ինչի նորը, ընկերության` *հինը*», «մոռացված հինը ժամանակակից նորն է» եւ հայերեն այլ արտահայտություններ:

Ծեր իմաստով իրանական աղբյուրից փոխառված «պառավ» եւ նույն նշանակությամբ վրացերենից հայերեն մուտք գործած «բիձա» բառերի շնորհիվ էլ հայերենը տարբերակում է «ծեր» բառի երկու սեռային դասերի պատկանելությունը. Իր կնոջը դիմող տարեց տղամարդը օգտագործում է «պառավս» փաղաքշական դիմելաձեւը, իսկ երիտասարդական տարիքը վաղուց հաղթահարած տատիկն էլ իր ամուսնուն` «բիձաս» գորովական մակդիրը:

«Ծերունազարդ» ածականն էլ իր գոյության համար պարտական է պատվավոր տարիքի հասած ծերունու պատկառանքին:

Այո, ծերությունը կյանքի այն երանելի հատվածն է, երբ դու գտնվում ես կենսափորձով վաստակած փառքի գագաթնակետին, եւ այլեւս մտերիմների նոր շրջանակ փնտրելու, ուրիշներին հաճոյանալու, եւ որ ամենակարեւորն է` կարիերայի հետեւից գնալու կարիքը չունես:

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

# «Ամեն անգամ նոր շնորհ եմ ակնկալում». Անուշ Հարությունյանի գեղանկարչական ցուցահանդեսը

**ՀԱՍՄԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

«Սպասում» էր խորագրել «Փյունիկ» արվեստի կենտրոնում վերջերս բացված իր անհատական ցուցահանդեսը երիտասարդ նկարչուհի **Անուշ Հարությունյանը**: Անուշի առաջին ծանրակշիռ ցուցադրությունը Երեւանի գեղարվեստի ակադեմիայում ուսանելու տարիներին էր, երբ Եղիշե Չարենցի տուն - թանգարանից առաջարկ ստացավ ներկայանալու իր արվեստով: Մինչ այդ կրթվել էր Փ. Թերլեմեզյանի անվ. գեղարվեստի քոլեջի դեկորատիվ - կիրառական արվեստի բաժնում, որտեղ հիմնավոր դասեր էր առել **Աննա Հովհաննիսյանից** եւ **Հասմիկ Ղազարյանից**: Գոբելենի հյուսքի միջոցով բարձր արվեստ ներկայացնելու վարպետությունը հաղորդել էր Հ. Ղազարյանը, գույնի գաղտնիքը յուրովի բացահայտելու ճանապարհն էր ցույց տվել Ա. Հովհաննիսյանը, եւ մեր զրույցում Անուշն առանձնակի սիրով ու երախտագիտությամբ էր տալիս իր ուսուցիչների անունները՝ անպայման հավելելով իր՝ որպես նկարչի կայացման հարցում գեղանկարիչ **Էդիկ Վարդանյանի** ավանդը: Երեւանի գեղարվեստի ակադեմիայում ուսանելու տարիներին Անուշը հենց նրանից էր գլխավոր դասերն առել եւ իր դասախոսի մահից ընդամենը շաբաթներ անց առանձին զգացմունքով էր հիշում նրա խոսքը. «Հետո պատվով պետք է ասեք, թե ու՛մ կուրսից եք եղել»: Հիմա, իրոք, հպարտությամբ էր խոսում իր վարպետից, եւ իր աշխատանքներում եթե ոչ ուղղակի, ապա անուղղակի երեւում էր Էդիկ Վարդանյանի «դպրոցի» ազդեցությունը: Չմանրամասնված, խոշոր վրձնահարվածներով, գունային վառ արտահայտությամբ կտավներն իսկույն առանձնանում էին մի քանի տասնյակ գործերի շարքում, դրանց թվում՝ թարմ յասամանափուն-



ջը, հայոց վանքի ընդհանրացված պատկերը՝ գոբելենի հյուսքին՝առաջին պլանում խոշոր փշածաղիկներով, այլ վանքանկարներ, բնանկարներ:

Սիրով եւ աղոթքով արված գործեր տեսա այս ցուցահանդեսում, հասկացա, որ նկարչուհին համառ է, նպատակասլաց եւ ի զորու է անելու ավելին իր աշխատասիրության եւ փնտրումի շնորհիվ: ԷդիկՎարդանյանի «դպրոցի» արժանավոր շարունակողը կլինի՝ իր գունազգացողությամբ, գունաընկալմամբ եւ երանգների վառ ընտրությամբ մեծամասամբ իր հայացքը հաղորդելու կարողությամբ: Անուշի տարբեր նյութերով արված գեղանկարչական աշխատանքների՝ ծաղկանկարների, վանքանկարների, նատյուրմորտների, ջրաներկ թերթերի, գրչագծագրումների կողքին ցուցադրված էին իրո՛ք վարպետությամբ հյուսված, ճաշակով, միեւնույն ժամանակ ընդգծված գաղափարայնությամբ, միտք եւ ուղերձներ կրող գոբելեն աշխատանքներն ու բատիկ տեխնիկայով ստեղծված կտավները:

Մտերմիկ զրույցների պես էին իր տատի գյուղական հին տան եւ բակի պատկերները, իր հաճախակի այցերի արդյունքում են ծնվել Աշտարակի վանքերի, Սաղմոսավանքի եւ այլ սրբավայրերի գեղանկարչական արձանագրումները: Պատմում էր Խոր Վիրապ իր այցի մասին. դիմահար քամին խանգարում էր նկարել, հոգնած իր ջանքից՝ շրջվել էր դեպ Արարատ եւ տեսել լույսից ծագող գագաթները, հենց այդպիսին էլ նկարել էր Բիբլիականը: Հեշտ ճանապարհ-



ներ չի փնտրել. պատանեկան տարիներից գերադասել է անսպասելիորեն հայտնաբերված, դժվարամատչելի վայրեր՝ բարձունքներ եւ ձորեր՝ իր ուզած հեռապատկերն ընտրելու եւ կտավին հանձնելու համար: Վանքերը պատկերելիս՝ մի հարց է շարունակ կրծել միտքը՝ ո՞նց պահպանել դրանք, ի՞նչ ուղիներ գտնել՝ խոնարհված եկեղեցիները վերականգնելու համար: Նկարչուհու մեկնաբանմամբ, իր գործերը նաեւ գեղանկարչության լեզվով օգնություն հայցող կանչ են, ահազանգ, եւ եթե ծավալուն գոբելենին եկեղեցու պատկերը շուրջառել է փշածաղիկներով, ապա դա մեր անցած Գողգոթան է, բայց վառ գույները սգո նշան չեն, այլ մաքառման արդյունքում՝ մեծ ակնկալիք:

Անուշ Հարությունյանն ինքն էլ դյուրին ճանապարհ չի անցել արվեստի աշխարհում. մի քանի տարի ընդմիջումից եւ նկարչությունից հեռանալուց հետո կամք եւ ուժ է գտել ուսումը շարունակելու, բարձրագույն կրթություն ստանալու համար կարողությունները թարմացնելու եւ սեփական անձին ապացուցելու համար, որ կարող է, պարտավոր է Աստծո տված շնորհն ի գործ դնելու: Հիմա գոհացած է, որ առանց ընդմիջելու ստեղծագործում է, թեեւ միաժամանակ զբաղված է ուսուցչական գործով. դասավանդում է տարբեր տարիքի պատանիներին եւ աղջիկներին Ղ. Սարյանի անվ.արվեստի դպրոցում:



Մանկավարժությունը կոչում է. պետք է նվիրվես մինչեւ վերջ».- ականջներում է իր վարպետի՝ Էդիկ Վարդանյանի հորդորը, եւ այդ սկզբունքով է առաջնորդվում ինքը՝ դպրոց մուտք գործելիս: Իրեն աշակերտածներից ոմանք այժմ մասնագիտական ուսումնական հաստատությունների սաներ են, եւ դա լավագույն գնահատականն է իր ջանքին: Բայց, սրանով հանդերձ, ունի սպասում, ինչի մասին ակնարկել է իր ցուցահանդեսի խորագրով: Դա կանացի, նեղ անձնական բնույթի երջանկության սպասման մասին չէ: Դա, իր ձեւակերպմամբ, «ամեն անգամ վրձին վերցնելիս Աստծուց նոր շնորհ ստանալու» ակնկալիքի մասին է:

# «Բախի ստեղծագործությունների կատարումն ընթացք է դեպի Արարիչ». երգեհոնահար Թերեզա Ոսկանյան

Հայ մի շարք կոմպոզիտորների երգեհոնային ստեղծագործություններ գրվել են հատուկ **Թերեզա Ոսկանյանի** կատարման համար: Երեք շաբաթ առաջ էր, որ Թ. Ոսկանյանը Կոմիտասի անվ. կամերային երաժշտության տանը հնչեցրեց **Երվանդ Երկանյանի** հոգեւոր երկերից մեկը՝ գրված միջնադարյան տաճարական երաժշտության թեմաներով: Իսկ ահա օրերս կայացած երգեհոնային երաժշտության երեկոն անցավ բացառապես Թ. Ոսկանյանի մենակատարմամբ: Այս անգամ ծրագրում հիմնականում բախյան վեհաշունչ երաժշտությունն էր: Թե լիներ այնպես, որ հայ երգեհոնահարներից շատերը մի հրաշքով հայտնվեին եվրոպական ուշ միջնադարի շրջանում, ապա նրանց կատարողական արվեստն արդարացիորեն շատ բարձր կգնահատվեր բարոկ արվեստի մեծանուն հեղինակների կողմից, եւ մեր Թերեզային էլ կվստահվեր դրանցից շատերի կատարումը: Համերգին Յոհան Սեբաստիան Բախի ծով ստեղծագործությունից հնչեցին «Գալիս է հեթանոսների փրկիչը», «Սիրելի Հիսուս, մենք այստեղ ենք», «Միայն սիրելի Աստծուն է տրված ներել», «Քրիստոսը, ամբողջ աշխարհի մխիթարությունը», «Քեզ եմ դիմում, Տեր Հիսուս Քրիստոս» խորալային պրելյուդները եւ այլ գործեր: «Բախի ստեղծագործությունների կատարումն ընթացք է դեպի Արարիչը, շարունակ հայտնություն եւ մաքրագործում,- ասում է Թերեզա Ոսկանյանը:- Հոգեզման նույնպիսի ազդեցություն ունեն հայ միջնադարյան նվագներն ու արդի հայ կոմպոզիտորների՝ երգեհոնի համար գրած շատ երկեր, որոնք ընդգրկված են իմ երկացանկում»:

Թերեզան ծնվել է Թբիլիսիում, երաժշտական կրթություն ստացել տեղի Պալիաշվիլու անվ. երաժշտական, ապա՝ Երեւանի Չայկովսկու անվ. տասնամյա դպրոցներում: Ուսանել է Երեւանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայում՝ որպես դաշնակահար աշակերտելով դոցենտ **Ի. Սեդրակյանին**, այնուհետեւ որպես երգեհոնահար՝ պրոֆ. **Վ. Ստամբոլցյանին**: Նա խորապես յուրացրել է երգեհոնային երաժշտարվեստի առանձնահատկությունները՝ աչքի ընկնելով իր կատարողական ունակություններով, ստեղծագործությունների ոգին հաղորդող զգայական նվագով, միջնադարյան դասական եւ հոգեւոր նվագների բարձր ոգեղենությունն արտահայտելու՝ տարեցտարի կատարելագործվող արվեստով: Նա, իրավի, մեծանուն երգեհոնահար Վ. Ստամբոլցյանի կատարողական «դպրոցի» արժանի շարունակողն է: Խորհրդանշական էր, որ ոչ վաղ անցյալում Վահագն Ստամբոլցյանի անվ. երգեհոնի միջազգային փառատոնի եզրափակիչ համերգին Թերեզա Ոսկանյանը պարգեւատրվեց ԿԳՄՍ մեդալով՝ Հայաստանում երգեհոնային արվեստի պահպանման եւ տարածման, ինչպես նաեւ երկար տարիներ գործունեության եւ երգեհոնային արվեստի ոլորտում ունեցած նշանակալից ավանդի համար:

Հանդես գալով թե՛ Հայաստանի մեծ ու փոքր բեմերում եւ թե՛ արտերկրի հայտնի համերգասրահներում ու հոգեւոր կենտրոններում՝ Թերեզա Ոսկանյանն իր կատարողական արվեստով գրավել է հազարավոր ունկնդիրների համակրանքը: Նրա արվեստը նվիրում է հայ հոգեւոր կյանքին, քանզի նաեւ Էջմիածնի Մայր տաճարում տրվող պատարագներին աղոթքները հնչում են իր նվագակցությամբ: Թերեզա Ոսկանյանը բարձր կուլտուրայով օժտված երաժիշտ է, համեստ, նրբամիտ անձնավորություն, իր գիտելիքները երաժիշտների նոր սերնդին հաղորդող վարպետ ուսուցիչ:

Հայ եւ համաշխարհային երաժշտարվեստից քաջատեղյակությունը եւ իր բարձր կատարողական արվեստն երգեհոնահարին թույլ են տալիս հանդես գալու բազմազան եւ հարուստ ծրագրերով: Դրա վկայությունն էր, օրինակ, 2017 թ.-ին համերգային ծավալուն ծրագրով երգչուհի **Հասմիկ Պապյանի** հետ ելույթը Տալլինի Մայր տաճարում՝ ՀՀ եւ Էստոնիայի երկկողմ հարաբերությունների հաստատման 25-ամյակի առթիվ: Օտարազգի երաժշտասեր հանրությունը եւս ծանոթ է Թերեզայի արվեստին եւ գնահատում է նրա պրոֆեսիոնալիզմը:

Բարձրորեն գնահատելի է Թ. Ոսկանյանի երկարամյա ծառայությունը Հնագույն երաժշտության «Տաղարան» համույթի կազմում, ինչպես նաեւ մասնակցությունը՝ արդեն տասնամյակներ հայ հանդիսականի համար պարբերաբար կազմակերպվող երգեհոնային համերգներին: «Տաղարան»-ի եւ այլ խմբերի հետ հյուրախաղերով նա հանդես է եկել Ավստրիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Իսպանիայում, Արգենտինայում, Բրազիլիայում, Ուրուգվայում,



Թուրքիայում, Լիբանանում, Ռուսաստանում, Էստոնիայում, Լիտվայում եւ այլուր: Արդյունավետորեն համագործակցում է երգիչ-մենակատարների հետ, ինչպես նաեւ Հայաստանի պետ. սիմֆոնիկ (դիրիժոր՝ **Է. Թոփչյան**), Հայաստանի կամերային (դիրիժոր՝ **Վ. Մարտիրոսյան**) նվագախմբերի, Հայաստանի պետ. ակադեմիական (դիրիժոր՝ **Հ. Չեքիջյան**), Հայաստանի պետ. կամերային (դիրիժոր՝ **Ռ. Մլքեյան**) երգչախմբերի հետ: Անհաս կատարողների հետ Թ. Ոսկանյանի համագործակցության եւս մի օրինակ էր մայիսի 18-ի համերգին թավջութակահար **Սամսոն Թաթոսյանի** հետ իր բեմելույթը: Երկու նվագարանների հուզական հնչմամբ կատարվեց Կ. Տեսարինիի Ֆա մաժոր սոնատը:

⇨5

# Ալեքսեյ Նարուտո. Ութ անգամ Հայաստանում՝ ժամանակակից պարով

ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

*ԵՐԵՎԱՆ - Մոսկվացի պարող Ալեքսեյ Նարուտոն (ծնված 1989 թ., Կրասնոյարսկում) բազմիցս ելույթ է ունեցել երեւանյան բեմերում: Ուսանել է Մոսկվայի Մեծահասակների թատերարվեստի ակադեմիայում (հայտնի որպես ՊԱՐՏ): Նրա ստեղծագործական կենսագրությունը հարուստ է բազմաթիվ ուշագրավ նախագծերով եւ ակտիվ գործունեությամբ: 2013-2022 թթ. Ալեքսեյն աշխատել է «Բալետ Մոսկվա» խմբում, համագործակցել տարբեր երկրների պարուսույցների հետ, դասավանդել է այնպիսի հեղինակավոր հաստատություններում, ինչպիսիք են «Ցեխ» ժամանակակից պարի կենտրոնը, ԳՈԳՈԼ-դպրոցը, ՊԱՐՏ ակադեմիան, ԳԻՏԻՍ-ը, Մոսկվայի գեղարվեստական թատրոնի դպրոցը եւ այլն: Զբաղվում է նաեւ ինքնուրույն ստեղծագործական գործունեությամբ, կնոջ՝ պարուհի Օլգա Տիմոշենկոյի հետ հիմնել է ՆԱՐՈՒՇԵՆԿԻ ժամանակակից պարախումբը: Նրանց համաբեմադրությունները ներկայացվել են տարբեր փառատոներում, համագործակցել են Տրետյակովյան պատկերասրահի եւ ՎԱԿ հիմնադրամի, Լյումիեր եղբայրների անվան լուսանկարչական պատկերասրահի (Մոսկվա) հետ: Նրանց ներկայացումները բազմիցս եղել են Ռուսաստանի ազգային թատերական «Ոսկե դիմակ» մրցանակի թեկնածու տարբեր անվանակարգերում:*





**-Ալեքսե՛յ, ինձ թվում է, որ Նարուտոն քո բեմական անունն է: Մանգայի սիրահա՞ր ես:**

-Իրականում սա իմ իսկական ազգանունն է, որը ես ժառանգել եմ իմ նախապապից, որը Սիբիր աքսորված լեհ կամ լիտվացի էր, ճշգրիտ չգիտենք:

**-Հետաքրքրական է: Առաջին անգամ քեզ տեսել եմ երկու տարի առաջ՝ Երեւանի ժամանակակից պարի «Սամմիթ» միջազգային փառատոնի շրջանակներում, որտեղ դու եւ Օլգան կատարեցիք «Քառասուն» դուետը: Հիշում եմ, որ բեմադրությունը մի փոքր ծանր էր, բայց հետաքրքրաշարժ: Այդ ժամանակվանից մենք քեզ հաճախ ենք տեսել երեւանյան բեմերում: Այդպե՞ս սկսվեց համագործակցությունդ Հայաստանի հետ:**

-Իրականում, առաջին անգամ եկել եմ նախորդ՝ առաջին «Սամմիթին» 2021-ին, «Բալետ Մոսկվա» թատերախմբի կազմում «Բոլոր ճանապարհները տանում են դեպի հյուսիս» ներկայացմամբ: Այդ ժամանակից ի վեր սա իմ ութերորդ այցն է Հայաստան: Ինձ համար շատ հաճելի է լինել այստեղ, հետաքրքրական է ուսումնասիրել մշակույթը, մարդկանց, շրջապատը: Ես ծովի մեծ սիրահար եմ, այնպես որ, եթե այստեղ ծով լիներ, ես ընդմիշտ կտեղափոխվեի (*ծիծաղում է*):

**-Ենթադրում եմ, որ արդեն ծանոթ ես հայ ժամանակակից պարարվեստին:**

-Կարծում եմ՝ մասամբ գիտեմ, բայց կարող եմ ասել, որ հայ ժամանակակից պարը հետաքրքրական ուղի ունի, քանի որ այդ հետաքրքրությունը պայմանավորված է ազգությամբ եւ ինքնությամբ: Հայերը, իմ կարծիքով, ճկունության, մարմնական հարմարվողականության խառնուրդ են, մի տեսակ փափկությունը համադրված կրակի հետ: Ես ունեի ուսանողներ արվեստի քոլեջից, ու ինձ թվում էր, որ եթե համեմատենք տարերքների հետ, նրանք հակադրությունների համակցություն են, կրակի եւ ջրի խառնուրդ: Եթե նրանք չկորչեն ու միասին աճեն, ցնցող ոճ ձեռք կբերեն: Ինչ վերաբերում է պարուսույցներին, շատ անուններ չեմ կարող ասել, բայց կհիշեմ Ռիմմա Պիպոյանին եւ Վալերիա Կասպարովային:

**-Նույն 2022 թվականին Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանում ներկայացրիր Եղիշե Չարենցին նվիրված «Պատգամ» ներկայացումը: Մտահղացումը քո՞նն էր:**

-Դա գրքի փառատոնի ժամանակ էր: Պրոդյուսերներից մեկն առաջարկեց ներկայացում բեմադրել Չարենցի այդ հայտնի հայեցակարգային բանաստեղծության հիման վրա: Բանաստեղծության գաղափարը, որը ծածկագրված պատգամ է, հայության համախմբման կոչ, իսկապես ոգեշնչեց ինձ: Սկսեցի տեղեկություններ փնտրել Չարենցի մասին եւ նրա ստեղծագործության վերլուծություններ: Ինձ ապշեցրեց նմանությունները Մանդելշտամի հետ եւ թե ինչպես են տարբեր երկրներում կրկնվել ազատության, արվեստի եւ կյանքի համար պայքարող մարդկանց ճակատագրերը եւ ինչպես են իշխանությունները կոտրել ու ոչնչացրել նրանց: Հետաքրքրական էր աշխատանքը Չարենցի նման կերպարի վրա: Երկրորդ կեսը, որն ինձ հետաքրքիր էր, հայոց այբուբենն էր: Ձեր տառերը շատ ճկուն են, ուստի մենք պարզապես պարում էինք այդ բանաստեղծությունը:

**-Պարային լեզվով ինչպե՞ս մեկնաբանեցիք Չարենցի ուղերձը, որ հայ ժողովրդի միակ փրկությունը նրա միասնական ուժի մեջ է:**

-Մենք այն խմբավորեցինք, ասես պատկերազարդելով: Դա վերջին մենապարն էր հայ աղջկա կատարմամբ, որի վերջում բոլոր կատարողները շատ դանդաղ մոտեցան նրան ու գրկեցին՝ ստեղծելով մի տեսակ գմբեթ, տուն, միասնություն: Հետո նա դուրս եկավ եւ կողքից նայեց գմբեթին ու տանը: Ընդհանուր առմամբ, բեմադրության մեջ կարեւոր տեղ է զբաղեցնում տան խորհրդանիշը: Հայերը հաճախ ստիպված են եղել լքել իրենց տունը, բայց ոչ միայն նրանք. հիմա այնպիսի զգացողություն ունեմ, որ մենք հաճախ կորցնում ենք մեր տունը եւ նորից գտնում, այն անհետանում է կամ փախչում մեզանից: Երբ աղջիկը թողնում է այս կոմպոզիցիան եւ նստում մի կողմում, նա կարծես սկսում է մի նոր փուլ, երբ նորից պետք է ստեղծի իր սեփական տունը՝ առանց այն քանդելու, բայց այն իմաստով, որ տունը կարծես լուծարվում է: Ինձ թվում է, որ մեր կյանքը մեր տան մշտական վերստեղծումն է:

**-Հիշեցի քո մյուս կատարումը «Հայ արտ» կենտրոնում, դա ե՞ւս իմպրովիզացիա էր:**

-Ո՛չ, դա «Սեւ երկինք» էկո-ներկայացումն էր, բնապահպանական թեմայով վավերագրական թատրոն է, սինթետիկ ներկայացում՝ մեծ ազատությամբ: Այն իմպրովիզացիոն է թվում, քանի որ աշխատանքը որոշակի գործիքակազմի հիման վրա է արվել, կա կառուցվածք, բայց արձանագրված չեն՝ ո՛ր պահին ի՛նչ որոշակի շարժումներ է պետք կատարել: Իրականում, այն հիշողությունների շարք էր իմ ծննդավայր Կրասնոյարսկից ու այնտեղ առկա բնապահպանական աղետից՝ օդի աղտոտվածություն եւ խիտ մշուշ: Մենք հարցազրույցներ վարեցինք քաղաքի բնակիչների հետ, թե ինչպես են նրանք դա զգում իրենց մաշկի վրա, եւ դրանց հիման վրա թատերագիր Անդրեյ Ժիգանովի հետ միասին պատրաստեցինք աուդիո պիես, որը ես վերածեցի մարմնական արտահայտության՝ ելնելով այս տեքստից եւ իմ անձնական փորձառություններից՝ կապված հայրենի քաղաքի էկոլոգիայի հետ:

**-Դու նաեւ անցած տարի Երեւանում կայացած սամբոյի աշխարհի առաջնության բացման եւ փակման հանդիսությունների պարադիրն էիր: Սպորտ եւ ժամանակակից արվեստ. կան շփման կետեր, ճի՞շտ է: Հատկապես եթե հիշենք Վինս Լոմբարդիի խոսքերը. «Պարը կոնտակտային սպորտ է»:**

-Համաձայն եմ: Կատարողականությունը մոտ է թե՛ խորեոգրաֆիային, թե՛ սպորտին: Երբ Ռուդոլֆ Նուրեեւը մի անգամ հանդիպել է մի տիեզերագնացի, վերջինս ասել է պարողին. «Այն, ինչ դու անում ես բեմում, մոտավորապես այն է, ինչ տեղի է ունենում ինձ հետ, երբ ես թռչում եմ տիեզերք»: Իսկապես, բալետի պարողի ֆիզիկական ծանրաբեռնվածությունը հիշեցնում է բարձր սպորտ, տիեզերագնացություն, այն գտնվում է մարդու մարմնի հնարավորությունների սահմանագծին: Ժամանակակից պարը, կոնտակտային իմպրովիզացիան այն բաներն են, որոնք շատ ոգեշնչված են սպորտով, հատկապես մարտարվեստով: Երկու մարդ, երկու մարմին բախվում են, դա ինչ-որ առումով վտանգավոր է, նման բախման համար պետք է ունենալ որոշակի համարձակություն, հմտություններ եւ քաջություն: Ուստի սպորտը մոտ է պարին, եւ սրանք միմյանց լրացնող երկու ուղեկից աշխարհներ են: Ի դեպ, սամբոյի առաջնության ներկայացման մեջ ինձ ոգեշնչել է հայկական յարխուշտա ռազմապարը, որի հիման վրա որոշ հատվածներ եմ բեմադրել: Ռուսաստանում ժողովրդական պարերն ինձ երբեք չեն ոգեշնչել, բայց Հայաստանում իմ փորձառությունից հետո սկսեցի դրանցով հետաքրքրվել մարդաբանական տեսանկյունից, սկսեցի այլ կերպ նայել դրանց՝ որպես մի տեսակ մարդկային ծածկագրի, որը պլաստիկայի միջոցով կերտում է ժողովրդի եւ տեղի բնութագիրը, պատմությունը եւ խորհրդաբանությունը:

**-Հայաստանի հետ կապված ուրիշ նախագծեր ունե՞ս:**

-Հրավիրված եմ բեմադրելու Երեւանի դրամատիկական թատրոնում Ռեմարկի «Երեք ընկեր» բեմադրության պարային տեսարանները: Կլինի ե՛ւ ժամանակակից պար, ե՛ւ տեքստ: Եվ հուսով եմ, որ սա իմ վերջին նախագիծը չէ Հայաստանում, ես կգամ եւ կստեղծագործեմ այստեղ՝ մշակույթների եւ տեսլականների խաչմերուկում: Ինձ շատ է ոգեշնչում այն, որ չհասկանալով հայոց լեզուն՝ ինձնից շատ բան է «խույս տալիս», բայց իմ տեսլականն ու իմ առաջարկները, այն ամենն, ինչ ներդնում, ստեղծում եմ հայոց հողում, ինչ-որ կերպ աճում է յուրովի, բեկվում է, փոխվում ու ձեւափոխվում: Սա չափազանց կարեւոր բան է, որից ծնվում է երկու տարբեր ժողովուրդների այս համագործակցությունը: Ի վերջո, անչափ հետաքրքրական է դիտարկել, թե ինչպես են տարբեր ծագում ունեցող մարդիկ բախվում, հանդիպում, միավորվում եւ գտնում նոր ելք ու շփման նոր կետեր...

## «Բախի ստեղծագործությունների կատարումն ընթացք է դեպի Արարիչ». երգեհոնահար Թերեզա Ոսկանյան

⇨4 Իսկ համերգային երեկոյի ավարտին երգեհոնահարը ծրագրից դուրս կատարեց Ե. Երկանյանի «Անցյալի որմնանկարներ» սյուիտի վերջին մասը՝ գրված Ն. Շնորհալու «Տառածեալ»-ի թեմաներով: «Շուրջ 40 տարի ճանաչում եմ մեր լավագույն երգեհոնահարներից Թերեզա Ոսկանյանին, որի հետ անցել ենք երկար համագործակցության ճանապարհ,- ասում է ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչը:- Տակավին ուսանողական տարիներին նա, որպես տաղանդավոր երգեհոնահարուհի եւ կլավեսինահարուհի, իր վրա լուրջ ուշադրություն հրավիրեց: «Տաղարան»-ում համատեղ յոթնամյա գործունեությունից հետո էլ՝ մինչ օրս, իմ բոլոր երգեհոնային ստեղծագործությունների առաջին կատարումները վստահել եմ իրեն: Իր մեծ ուսուցչի՝ Վահագն Ստամբոլցյանի սիրելի սանն անուրանալի ավանդ ունի հայ երգեհոնային երաժշտության ասպարեզում՝այն մեծ հաջողությամբ ներկայացնելով նաեւ աշխարհի մի շարք երկրներում, ուր մշտապես արժանացել է ջերմ ընդունելության եւ բարձր գնահատանքի: Համաշխարհային երգեհոնային երաժշտության մի շարք գոհարներ Հայաստանում հնչել են նրա շնորհիվ: Լինելով երգեհոնային արվեստի իրական նվիրյալ եւ ջատագով՝ նա մեծ նպաստ է բերել ունկնդիրների լայն շրջանակ ձեւավորելու գործում»:

ՀԱՍՄԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

# «Ռուսական հատուկ ծառայությունները եւ պատերազմը Ուկրաինայում»

ՎԼԱԴԻՄԻՐ ԴԱՐԲԻՆՅԱՆ


Ռուսաստանի Անվտանգության դաշնային ծառայության (ФСБ) շենքը:




Փոխվո՞ւմ են արդյոք աշխարհի հետախուզական համայնքների դերը եւ աշխատանքային մեթոդները աշխարհում ու հատկապես Ռուսաստանի Դաշնությունում՝ հաշվի առնելով պատերազմը Ուկրաինայի դեմ:

Անկասկած փոխվում են: Սակայն, հիմնական խնդիրները, անկախ այն բանից, թե ինչ եւ նոր մեթոդներ են կիրառվում դրանք իրականացնելիս, մնում են նույնը:

Ահա հետախուզական հատուկ ծառայությունների առաջնահերթ խնդիրները.

1.Ապահովել կապը, տեղեկատվության փոխանակումը, համատեղ գործառույթները դաշնակից եւ բարեկամ հատուկ ծառայությունների հետ: Զնայած նշանավոր Ալեն Դալլեսը՝ ԱՄՆ ԿՀՎ հիմնադիրը, մշտապես նշում էր, որ չկան բարեկամ հատուկ ծառայություններ, այլ կան բարեկամ պետությունների հատուկ ծառայություններ:

2.Սաբոտաժների, դիվերսիաների, ահաբեկչական ակտերի կազմակերպում թիրախ պետություններում:

3. Պարտիզանական պատերազմներ, ընդդիմադիր շարժումներ եւ այլ գործողություններ թիրախ պետության թիկունքում՝ պետական հիմքերը խարխլելու նպատակով:

4. Հոգեբանական պատերազմ՝ V շարասյան ստեղծում թիրախ պետությունում եւ, իհարկե, քաղաքական կազմակերպությունների քայքայում:

5. Ստեղծել առանձին վերլուծաբանական կենտրոն, որը պետք է վերլուծի, ճիշտ գնահատականներ տա ձեռք բերված տեղեկատվությունների (այդ թվում եւ բաց տեղեկատվական աղբյուրներից) եւ կանխատեսի հետագա իրադարձությունները կապված «թիրախ պետության» գործողությունների հետ: Խոսքը վերաբերում է ռազմական, տնտեսական, գիտա-արդյունաբերական, սոցիալական եւ մշակութային ոլորտներին:

6. Տեղեկատվության հավաք եւ վերլուծություն - դա շարունակական գործունեություն է, որը չպետք է անտեսի նույնիսկ ամենաաննշան հետախուզական տվյալները:

Վերադառնանք ռուսական հատուկ ծառայություններին: Այնպիսի տպավորություն էր ստեղծվել, որ Ուկրաինայի դեմ լայնամասշտաբ պատերազմ սկսելուց հետո ՌԴ հատուկ ծառայություններում նկատելի խառնաշփոթ էր ստեղծվել: Սակայն, 2023 թվականի կեսերից ռուսական արտաքին եւ ռազմական հետախուզությունները զգալիորեն ակտիվացան, վերախմբավորվեցին, կենտրոնացան նորացված նպատակների շուրջ: Նամանավանդ, երբ վերջապես հասկացան, որ պատերազմ է ոչ միայն Ուկրաինայի դեմ, այլ՝ ամբողջ Արեւմուտքի: Իմիջիայլոց, մինչեւ հիմա հասկանալի չէ, ինչպե՞ս եւ ինչո՞ւ ռուսական հատուկ ծառայությունների համայնքը դա նախապես չէր կանխատեսել:

Եվ այսպես. Ռուսաստան-Արեւմուտք դիմակայությունը որոշ վերլուծաբաններ եւ փորձագետներ բաժանում են 3 ռաունդի:

I ռաունդը վերաբերում է հետհեղափոխական դարաշրջանին, որում շատերի կարծիքով հաղթող է ճանաչվել ռուսական կողմը, մանավանդ II Համաշխարհային պատերազմից հետո:

II ռաունդը համարվում է «Սառը պատերազմի» ամբողջ դարաշրջանը, որի վերջում տեղի ունեցավ Խորհրդային Միության կոլապսը, ինչպես նաեւ Ռուսաստանի պարտությունը:

Եվ վերջապես, հիմա ընթանում է III ռաունդը, որտեղ Ռուսաստանը հոգեվարքի մեջ, բայց չի հանձնվում եւ սպառնում է նույնիսկ միջուկային պատերազմով, օգնության խնդրանքով ձեռք է մեկնում Չինաստանին, Հյուսիսային Կորեային, Վիետնամին, դավաճանում է դաշնակից ժողովուրդներին, միայն թե II ճակատ չբացվի իր դեմ եւ գտնում է, որ այս ռաունդում իննն է հաղթելու:

Շատ անգամ նույնիսկ պարզ չէ, թե ինչպես է բաժանվում աշխատանքը ռազմական հետախուզության (գլխավոր Շտաբի գլխավոր վարչություն) Արտաքին հետախուզական ծառայության եւ Դաշնային Անվտանգության ծառայության միջեւ, ո՞ր ծառայությունը ինչի՞ համար է պատասխանատու պետության ներսում եւ արտասահմանում: Մասնագետների կարծիքով ռուսական հետախուզությունը հիմա շատ ակտիվ աշխատում է ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում, Իտալիայում եւ Ավստրիայում:

Բայց մի բան ակնհայտ է. այնպիսի տոտալիտար երկրներում, ինչպիսին Ռուսաստանն է, հատուկ ծառայությունների հիմնական խնդիրը՝ քաղաքական ռեժիմի պահպանումն է:

Միեւնույն ժամանակ ակնհայտ է, երբ պատերազմ է սկսվում հետախուզական համաստեղությունը (կոնկրետ ՌԴ-ում) Արտաքին հետախուզական ծառայությունը, ռազմական հետախուզությունը եւ ԴԱԾ-ի համապատասխան վարչությունը կենտրոնացնում եւ համատեղում են իրենց գործառույթները, որպեսզի պարզեն թիրախ պետության, կոնկրետ դեպքում՝ Ուկրաինայի ռազմական ծրագրերի էությունը, զենքի եւ զինամթերքի մատակարարումը դաշնակիցներից, Ուկրաինայի հասարակության տրամադրությունները: Շատ կարեւոր է Ռուսաստանի համար թիրախավորել եւ շարքից հանել Ուկրաինայի էներգետիկ ինֆրակառույցները, բարոյալքել խաղաղ բնակչությանը եւ ամենակարեւորը՝ կոտրել ուկրաինացիների հաղթելու կամքը:

ՌԴ հատուկ ծառայությունները այս պատերազմում գործում են արդեն այն համոզմունքով, որ իրենց հակառակորդը ոչ թե Ուկրաինան է, այլ ՆԱՏՕ-ի դաշինքը, այսինքն՝ «Հավաքական Արեւմուտքը»: Պատահական չէ, որ ռուս-ուկրաինական պատերազմը սկսվելուց հետո, աշխարհի տարբեր պետություններից արտաքսվել են 700-ից ավելի ռուսական հետախույզներ, որոնք գործում էին «դիվանագիտական ծածկերի» տակ: Եվ, իհարկե, դասականը հայտնում է, որ նման դեպքերում շատ անհրաժեշտ է ստեղծել նոր լրտեսական (հետախուզական) ցանցեր, օրինակ՝ Լատինական Ամերիկայում, Հարավ-Արեւելյան Ասիայում, Աֆրիկայում եւ այլն:

Այդպես են գործում բոլոր հատուկ ծառայությունները: Եթե մի տեղ կորցնում են գործակալական ցանցերը, պետք է ստեղծվեն նորերը, հակառակ դեպքում նրանց գոյությունը, այդ հսկայական ծախսերը պետական բյուջեից՝ անիմաստ են դառնում: Սակայն, իհարկե, մեծ տարբերություն կա տարբեր հետախուզական կազմակերպությունների «modus operandi»-ների միջեւ (գործունեության կերպ, աշխատանքային ռեժիմ):

Օրինակ՝ ԱՄՆ-ում հետախուզական աշխատանք իրականացնում են ԿՀՎ-ն (Կենտրոնական Հետախուզական վարչությունը) եւ երկու տասնյակից ավել այլ գերատեսչություններ, եւ արդյունքները կենտրոնացվում են Ազգային հետախուզության կենտրոնում, չնայած, բոլոր հատուկ ծառայությունները առանձին-առանձին կարող են զեկուցել պետության ղեկավարին, Ազգային Կոնգրեսին եւ այլն:

Ռուսաստանում դա համակարգված չէ, հիմնական հետախուզային աշխատանքը վարում է այն կազմակերպությունը, որի ղեկավարին ամենաշատն է վստահում **Վլադիմիր Պուտինը**, ավելի կոնկրետ՝ ԴԱԾ-ը (տնօրեն՝ **Ա. Բորտնիկով**): Օր.՝ ուկրաինական զորքերի եւ զինտեխնիկայի տեղաշարժերը տրամաբանորեն պետք է հսկվեն ՌԴ ԶՈՒ ԳՇ ռազմական հետախուզության կողմից, բայց հսկվում են ԴԱԾ-ի կողմից:

Որ ռուսական հատուկ ծառայությունները շատ բացթողումներ եւ սխալ հաշվարկներ ու վերլուծություններ ունեն, դրանում ոչ մի կասկած չկա: Օրինակ՝ «Կրոկուս»-ում տեղի ունեցած ահաբեկչությունը, որի հետեւանքով զոհվեցին 140-ից ավելի անմեղ մարդիկ եւ մի այդքան էլ վիրավորվեցին: Կամ վերջին ահաբեկչությունը Հյուսիսային Կովկասի Մախաչկալա եւ Դերբենտ քաղաքներում, որ տեղի ունեցան այս տարվա հունիսի 23-ի երեկոյան:

Դերբենտի ուղղափառ եկեղեցում, Սուրբ Երրորդության տոնակատարության ժամանակ, անհայտ անձինք ահաբեկչության ենթարկեցին ավելի քան 20 մարդու, այդ թվում 15 ոստիկանների: Միեւնույն ժամանակ ահաբեկչական հարձակում եղավ հրեական սինագոգի վրա: Ի՞նչ նպատակ էր հետապնդում այդ ահաբեկչական ակտը բազմազգ եւ բազմակրոն Դաղստանում: Միանգամայն պարզ է՝ թուլացնել հասարակության համախմբումը; խառնաշփոթ եւ քաոս ստեղծել Ռուսաստանում: Իսկ միթե՞ ռուսական ԴԱԾ-ը չէր կանխատեսում նման ահաբեկչական ակտ իրենց երկրում, նամանավանդ «Կրոկուսի» դեպքերից հետո: Հենց դրա համար են ստեղծված Հակահետախուզությունը եւ հակաահաբեկչական ստորաբաժանումները, որպեսզի հաշվարկեն խոցելի կետերը եւ ուժեղացնեն հսկողությունը այդ կետերում, մանավանդ երբ պետությունը պատերազմի մեջ է: Մանավանդ, երբ Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ բարեկամություն ես անում: Ըստ չճշտված տվյալների, այդ ահաբեկիչները նույնպես Թուրքիայում են պատրաստվել:

Այսօր բոլոր փորձագետներն ու քաղաքական վերլուծաբանները վստահորեն ընդգծում են, որ ամբողջ աշխարհում ուժեղանում եւ ամրապնդվում է իսլամական ջիհադիզմի գլոբալ առանցքը (սկսած Մոզամբիկից, վերջացած Ռուսաստանով): Ռուսաստանում սա պետք է լավ իմանան, մանավանդ որ Պուտինյան Ռուսաստանը ակտիվորեն աջակցում է Ասադյան Սիրիային՝ Իսլամական Պետության - Խորասանի դեմ:

Բայց վերադառնանք Ռուսաստան-Ուկրաինա հակամարտությանը, որը տեւում է գրեթե 2,5 տարի:

Այս ամբողջ պատերազմի ընթացքում եւ հաշվի առնելով վերջին «ցնցումները» ՌԴ Զինված ուժերում, ակնհայտ է դառնում, որ Պուտինը ամենից շատը վստահում է իր հատուկ ծառայություններին՝ նամանավանդ ԴԱԾ-ին, որի առջեւ դրված հիմնական խնդիրը շարունակում է մնալ պայքար «Գունավոր հեղափոխությունների» դեմ: Իհարկե, սա նույնպես կարեւորագույն հարց է, բայց հատուկ ծառայությունը եւ նրա ղեկավարությունը երբեք չպետք է առաջնորդվեն մի սկզբունքով՝ ամեն կերպ հաճոյանալ պետության առաջին դեմքին: Կա հատուկ ծառայությունների աշխատանքում նաեւ մի այլ մեծ թերություն՝ հաշվետվության մշակույթը, որում հաճախ տեղ են գտնում ավելորդ օպտիմիզմը (լավատեսությունը), գերագնահատված հաջողությունները եւ խոցելի, թույլ կողմերը թաքցնելը:

Ամերիկյան վերլուծաբանները հայտնում են, որ ՌԴ ԴԱԾ եւ ԱՀԾ օպերատիվ կազմը ուկրաինական գործակալական ցանցի հետ (Ուկրաինա ներխուժելուց առաջ) հիմնականում աշխատել են Թուրքիայի, Կիպրոսի ու Եգիպտոսի հանգստավայրերում: Այդ գործակալների հիմնական խնդիրը կայանում էր Ուկրաինայում ներքին ապակայունացում իրականացնելը, այդ թվում՝ նաեւ իրավապահ մարմիններում, Զինված ուժերում, ինչպես նաեւ կրիմինալ կառույցների ակտիվացում: Եվ, իհարկե, ռուսական հատուկ ծառայությունների առջեւ դրված կարեւորագույն խնդիրներից մեկը՝ դա Ուկրաինայի ղեկավարության վրա ապահովել համապատասխան ազդեցություն՝ ՆԱՏՕ-ին միանալու կուրսից հրաժարվելու համար:

Ինչպես տեսանք, ծրագրերը, որոնք մշակված էին ՌԴ հատուկ ծառայությունների կողմից, ուկրաինական գործակալական ցանցի եւ Ուկրաինայի նախկին պաշտոնատար անձանց (Յանուկովիչ, Պավել Լեբեդեւ, Ալեքսանդր Յակիմենկո, Վիտալի Զախարչենկո) օգնությամբ չաշխատեցին...

# Հանրաքվեներ, որոնք հավակնում են «ժողովրդավարացնել» Հայաստանը

ԱՐԱՄ ՍԱՖԱՐՅԱՆ

Քաղաքական վերլուծաբան, Եվրասիական փորձագիտական ակումբի համակարգող

**Իշխանական «վերեւներում» խոսում են Հայաստանում հանրաքվեների կազմակերպման մասին, որոնք, մասամբ, կպատասխանեն հանրությանը հուզող մի շարք արդիական հարցերի: Ներքաղաքական լարվածությունը անջրպետ է դրել քաղաքական մի ամբողջ շարք գործընթացների հանդեպ եւ այդ գործընթացները չխափանելու համար պարզություն է հարկավոր: Մի քանի կարեւոր հարցերում, կարծես, ուրվագծվել է հանրաքվե անցկացնելու գաղափարը, բայց դա ծնում է նոր հարցեր եւ անհարմարություններ: Մեր այս հոդվածում կփորձենք վերլուծել այն մի քանի ուղղությունները, որոնցում հասարակական լուրջ տարաձայնություններ են ուրվագծվել, որոնք, թվում է, կարելի է հաղթահարել միայն հանրաքվեների միջոցով:**

## Հանրաքվե Ադրբեջանի հետ խաղաղության պայմանագրի ստորագրման հարցով

Թվում է, թե բոլորի համար պետք է պարզ լինի, որ Ադրբեջանի հետ խաղաղության եւ փոխադարձ ճանաչման վերաբերյալ բանակցությունները ուղղակի այլընտրանք չունեն: Սահմանների սահմանազատման եւ սահմանագծման գործընթացի ավարտից հետո պարզորեն կկանգնի խաղաղության պայմանագրի ստորագրման հարցը: Կարող էր թվալ, թե այստեղ ամեն ինչ պարզ է: Իրականում, Հայաստանի բնակչության մեծ մասը նոր պատերազմ չի ուզում: Բոլորը հասկանում են, որ 2020թ. հետո հայկական բանակը պատրաստ չէ որեւէ լուրջ պատերազմի: Պարզ չէ, թե երբ պատրաստ կլինի: Բազմահազարանոց հանրահավաքները բողոքում էին անարդար սահմանագծման դեմ: Բայց գործընթացը կասեցնել չկարողացան: Հայաստանի իշխանությունը հետ չի կանգնելու Ադրբեջանի հետ խաղաղության պայմանագիր ստորագրելու մտքից մի շարք, արդեն հայտնի արտաքին ու ներքին պատճառներով: Այդ պայմանագրի կնքման ողջ պատասխանատվությունը մնացել է **Նիկոլ Փաշինյանի** եւ նրա կառավարության վրա: Իշխանությունը տեսնում է, որ Հայաստանի բնակչության մեծամասնությունը չի մասնակցել բողոքի հանրահավաքներին ու գործողություններին, իսկ դա կարող է նաեւ նշանակել, որ լուռ մեծամասնությունը պաշտպանում է իշխանության քայլերը: Բայց բոլորն են հասկանում, որ դա միանշանակորեն այդպես գնահատելը ճիշտ չէ: Մեծամասնության լռությունը կարող է նշանակել ոչ միայն աջակցություն, այլեւ ապատիա, լուռ դժգոհություն եւ ինքնամեկուսացում: Պետք է քաջ հայտնի լինի, որ այսօրվա լուռ մեծամասնությունը վաղը կարող է ընդունել ընդդիմադիր կեցվածք եւ նրա այսօրվա դիրքորոշման վրա հենվելը ուղղակի ճիշտ չի լինի: Կասկածից վեր է, որ Հայաստանի այսօրվա իշխանությունը սկզբունքորեն պոպուլիստական է եւ դա նշանակում է, որ նա իր բոլոր վճռական քայլերում հենվում է հասարակական ակտիվ մեծամասնությունից ստացվող ազդանշանների վրա: Ասում են, որ հաճախ կազմակերպվող հասարակական կարծիքի փակ եւ բաց հարցումները վճռական դեր ունեն իշխանությունների քաղաքական հայտարարությունների եւ դիրքորոշումների համար:

Ահա այս ելակետային պայմաններում իշխանությունը երեւի կուզենար ստանալ միանշանակ եւ պարզ հասարակական աջակցություն անխուսափելի թվացող այնպիսի գործընթացում, ինչպիսին են հայ-ադրբեջանական եւ, այնուհետեւ, հայ-թուրքական բանակցությունները: Եթե իշխանությունները հասարակության քննարկմանն են ներկայացնում այս հարցերի վերաբերյալ հանրաքվե անցկացնելու հարցը, ապա պետք է հասկանալի լինի, որ միայն հասարակական կարծիքի հարցումներով նրանք առաջնորդվել չեն ցանկանում կամ այլեւս չեն կարող:

Մեր հոդվածներում դեռ երկու տարի առաջ մենք առաջ ենք քաշել այս զգայուն հարցերի կապակցությամբ հանրաքվե անցկացնելու խնդիրը: Մենք շատ լավ հասկանում ենք, որ հանրաքվեն պետք է ազատի իշխանության ձեռքերը խաղաղ գործընթացը փոխադարձ ընդունելիության սկզբունքով առաջ մղելու համար: Հայաստանի զիջումները թվում են անխուսափելի, եթե երկրի ներսում վճռական դիմադրության մթնոլորտ չլինի: Հարց է. ընդդիմադիր վերջին շարժումները նշանակո՞ւմ են արդյոք, որ նման մթնոլորտ կա: Սա բարդ հարց է, որի կապակցությամբ նույնպես բանավեճ կարող է ծավալվել: Այսպիսով, հանրաքվեն կարող է միաժամանակ պարզություն մտցնել այն հարցում, թե պատրա՞ստ է արդյոք Հայաստանը ստորագրելու խաղաղության պայմանագիր Ադրբեջանի հետ: Պարզ է, որ այդ ստորագրումից հետո արագորեն առաջ կգնա Թուրքիայի հետ հարաբերությունները կարգավորելու եւ սահմանները բացելու գործընթացը: Հանրաքվեն երեւի թե մի քանի տարվա ապահովության բարձիկ կարող է ստեղծել իշխանության համար, եթե նա **իր ուզած ձեւով** կազմակերպի եւ հաջողությամբ ավարտի հանրաքվեի գործընթացը:

## Հանրաքվե Եվրոպական միությանը անդամակցելու հարցում

Արեւմտամետ քաղաքական գործիչները առաջ են մղում այս հարցով հանրաքվե կազմակերպելու գաղափարը: Պարզ է, որ հակառուսական տրամադրությունների աննախադեպ բորբոքման համապատկերում մարդկանց սիմպատիաները կարող են ուղղված լինել հիմա էլ դեպի Արեւմուտք: Սա պազից էլ պարզ է, բայց այստեղ եւս հասարակական կարծիքի հարցումների արդյունքներին ապավինելը առանձնապես հեռանկարային չի թվում: Տեղին է հիշեցնել, որ ընդամենը վեց տարի առաջ հայկական հասարակության 86% աջակցում էր Ռուսաստանին: Այսօրվա հարցումները ցույց են տալիս, որ այդ թիվը իջել է մինչեւ 30%-ից ցածր: Նկատի ունենալով, որ հասարակական տրամադրությունները սկսել են արագորեն փոխվել, կարելի է մտածել նաեւ, որ դրանք այնուհետեւ էլի են փոխվելու: Ուրեմն հիմա է արեւմտամետ իշխանության եւ նրան սատարող քաղաքական վերնախավերի կարծիքով հասունացել պահը, երբ պետք է ստանալ հասարակական աջակցություն դեպի Արեւմուտք շարժվելու համար: Հետաքրքրական է, որ Հայաստանում ԵՄ-ին անդամակցության տրամադրություններ են տարածվում այն ժամանակ, երբ Վրաստանում առաջընթաց չեն տեսնում իրենց անդամակցության հարցում եւ փորձում են ավելի կենսունակ դիրքորոշումներ մշակել տարածաշրջանային գործընթացներում խաղաղորեն տեղավորվելու համար: Հայաստանի արեւմտամետները շտապում են, որովհետեւ զգում են, որ հասարակական տրամադրությունները, ինչպես որ փոխվել են իրենց օգտին ընդամենը 2-3 տարում (ինչը սոցիոլոգները չէին կարող կանխատեսել) կարող են էլի փոխվել եւ մի քանի տարի հետո վերադառնալ նախկին ցուցիչներին: Դա կախված է այն բանից, թե ե՞րբ եւ ինչպե՞ս Ռուսաստանը կավարտի ուկրաինական ճգնաժամը, եւ դրանից հետո ի՞նչ կխոստանա ետխորհրդային տարածքի երկրներին: Ուրեմն հանրաքվեի նախապատրաստման եւ անցկացման ամբողջ շրջանում բանավեճ է լինելու արեւմտամետների եւ եվրասիական գաղափարի կողմնակիցների միջեւ: Ըստ ամենայնի հասարակության ակտիվ մասում իշխանությունը «կողմ» ստանալու դժվարություն չունի: Բայց շատ դժվար է կանխատեսել, թե ինչպես կպահի իրեն լուռ մեծամասնությունը: Պատրա՞ստ է արդյոք Հայաստանի բնակչության մեծամասնությունը, լավ հասկանալով քայլի հետեւանքները, իր վրա վերցնել պատասխանատվությունը արեւմտամետ իշխանության եւ արեւմտամետ քաղաքական ուժերի գործողությունների համար: Տարածաշրջանի երկրները (եւ ոչ միայն Ռուսաստանը) ուշադրությամբ հետեւելու են այս հանրաքվեի գաղափարի առաջխաղացմանը եւ փորձելու են ազդել դրա վրա: Ամեն մեկը յուրովի:



## Հանրաքվե սահմանադրական բարեփոխման վերաբերյալ

Արդեն երկու-երեք տարի է, ինչ նույն «վերեւներում» խոսում են սահմանադրությունը փոփոխելու անհրաժեշտության մասին: Այդ փոփոխությունների անհրաժեշտությունը շատ ակնառու է դարձել: Սահմանադրության ոգու եւ տառի նկատմամբ վերաբերմունքը ցույց է տալիս, որ կա՛մ սահմանադրական բոլոր նորմերն անխտիր պետք է կատարվեն, կա՛մ դրանցում փոփոխություն է անհրաժեշտ: Սակայն հասկանալի է դարձել, որ այդ փոփոխությունները շատ արագ չեն լինելու: Իրար գլխի հավաքված այն հարցերը, որոնց պարզաբանման համար իշխանություններին հարկավոր է հանրաքվեի միջոցով ստանալ հասարակության մեծամասնության աջակցությունը, շատ են, եւ անպայմանորեն առաջ է գալիս հարց, թե ինչպե՞ս է տեխնիկապես այդ ամենը կատարվելու:

Առայժմ Հայաստանի ակտիվ գործող իշխանական եւ իշխանամետ քաղաքական ուժերն ու գործիչները զբաղված են հաշվարկելով, թե ի՞նչ է տալու այս եւ մյուս հարցերում հանրաքվեների կազմակերպումը: Ուզում ենք կրկին հիշեցնել, որ դեռեւս 2021թ. մենք «**Ազգ**» թերթում առաջարկել ենք լրջորեն օգտվել խորհրդատվական հանրաքվեների ընձեռած հնարավորություններից: Ժողովրդավարական պետություններում նույնիսկ 2%-ի տարբերությամբ հանրաքվեները հիմք են քաղաքական որոշումներ ընդունելու համար: Հիմա հարց է առաջանում, թե արդյոք Հայաստանում մի քանի տոկոսի տարբերությամբ ընդունված համազգային որոշումները կարո՞ղ են բավարար լինել հասարակական համերաշխություն ձեւավորելու եւ առկա ատելության ու առճակատման մթնոլորտը թուլացնելու համար: Ավելի պարզ ասած՝ կարելի՞ է արդյոք վստահ լինել, որ յուրաքանչյուր հանրաքվեից հետո բողոքի ալիքներ եւ բախումներ չեն լինի:

Հայաստանը տարածաշրջանի ամենափոքր երկիրն է եւ չի կարողանում, դժբախտաբար, մինչեւ հիմա բուժել իր պարտությունից ստացած վերքերը: Տարածաշրջանի հարեւանները ուշիուշով հետեւում են մեր երկրում ծավալվող քաղաքական գործընթացներին, փորձելով հասկանալ, թե ե՞րբ Հայաստանը ուշքի կգա:

Եթե վերոհիշյալ եւ այլ հարցերով հանրաքվեների գաղափարները միս ու արյուն ստանան եւ սկսվի դրանց կազմակերպման իրական աշխատանքը, պետք կլինի պարզորեն հասկանալ, թե դրանից Հայաստանը ավելի անվտանգ, կայուն եւ համախմբված կարո՞ղ է արդյոք դուրս գալ:

## Հասարակական տրամադրությունների փոփոխության հարցը

Իսկապես որ, սոցիոլոգները պնդում են, որ կողմնորոշումների հարցում արագ տրամադրությունների փոփոխություն սպասել պետք չէ: Բայդ նրանք սխալվել են: Հայաստանում հասարակական տրամադրությունները սկսել են արագ փոփոխվել իշխանության քաղաքական գծի եւ երկրի ներսում քաղաքական քարոզչության ազդեցությամբ: Եթե հանրաքվեները կարողանան բաց հասարակական քննարկման ճանապարհ բացել աշխարհաքաղաքական նախապատվությունների կողմնակիցների միջեւ, հնարավոր է, որ Հայաստանը գա որեւէ կառուցողական եզրահանգման: Բայց դրա համար անհրաժեշտ է, որ, օրինակ, եվրասիական հայացքների կողմնակիցներին տեղ տրվի պետական եւ արեւմտամետ առաջատար լրատվամիջոցներում ազատորեն արտահայտվելու համար: Պետք է, որ տարբեր գաղափարների կողմնակիցները ոչ թե կռվեն կամ ատելություն սերմանեն միմյանց նկատմամբ, այլ ձեւավորեն կառուցողական փնտրտուքի մթնոլորտ հանուն կայունության եւ անվտանգության:

Հայաստանը չունի հանրաքվեների անցկացման մշակույթ: Հայաստանը չունի ներքին խաղաղ երկխոսության մշակույթ: Երկխոսության եւ բանավեճի իմիտացիան, որը մեզանում առկա է, չի թուլացնում առկա ատելության մթնոլորտը: Կառավարությունն է պատասխանատու այդ մթնոլորտի ձեւավորման համար: Քաղաքական իշխանությունն է պարտավոր ժողովրդավարական հիմքեր ստեղծել հասարակության ազատ կամարտահայտման համար: Իշխանությունը չի կարող ընդդիմության կամ բողոքող զանգվածի վրա գցել ժողովրդավարության դեֆիցիտի մեղքը: Այս պարզ դատողությունները գալիս են հաստատելու, որ իշխանությունը եւ ընդդիմությունը հասարակական բաց բանավեճի արդյունքում պետք է մի հասկանալի հայտարարի գան այն հարցում, որ հանրաքվեները մի քանի տարով հիմք են ստեղծելու քաղաքական գործընթացների համար: Ասում ենք մի քանի տարով, որովհետեւ հասկանում ենք, որ այդ տրամադրությունները դեռ էլի արմատապես կարող են փոխվել: Բայց խաղաղությունը, որը կստեղծի մի քանի տարվա հիմք, նույնպես կարեւոր է քաղաքական արդիական գործընթացերը ծավալելու համար: Ուրեմն ասելը, թե մենք ուզում ենք հանրաքվե, ուրեմն մենք ժողովրդավար ենք, շատ քիչ է: Մենք պարտավոր ենք մտածել այն մասին, թե ի՞նչ բովանդակություն են ունենալու հանրաքվեների գործընթացները եւ ի՞նչ արդյունքի են հասցնելու հասարակական համերաշխության առումով:

***Խմբ. կողմից** հիշեցնենք, որ մերինի նման ավտորիտար եւ բռնապետական երկրներում կանխորոշված են որեւէ հանրաքվեի կամ ընտրության արդյունքները:*

# Ով է շտապում

⇨1 Մի քանի նախանշանային իրողություն, որ անկանխատեսելի աշնան մատնացույց են:

Հունիսի 21-ին ԱԺ Եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի նախաձեռնությամբ տեղի ունեցած լսումները՝ «Հայաստանի՝ Եվրոպական Միության անդամակցության հայտ ներկայացնելու հարցով հանրաքվե անցկացնելու առաջարկի շուրջ» թեմայով (հանրաքվեն առաջարկում են Արամ Զ. Սարգսյանի, Արման Բաբաջանյանի, Լեւոն Շիրինյանի եւ Տիգրան Խզմալյանի ղեկավարած եվրոպամետ կուսակցությունները) ավելի շատ հարցեր առաջադրեցին , քան պատասխաններ ունեցան: ԱԺ ամբիոնից Ա. Բաբաջանյանի կախած ԵՄ դրոշից նյարդայնացած ԱԺ եվրոինտեգրման հանձնաժողովի նախագահ **Արման Եղոյանի**՝ անգամ հաջորդ օրը Հանրային հեռուստատեսությանը տված պատասխաններից հայտնի չէր՝ Հայաստանն ուզո՞ւմ է ռեալ քայլեր անել այդ ուղղությամբ, թե՞ ԵԱՏՄ-ում գտնվելու տնտեսական շահն այս պահին պահանջում է հարցն անորոշ կախել օդում: Մինչեւ՝ «յա էշը սատկի, յա էշատերը»:

Մինչ այդ՝քաղաքական մեծամասնությունը հարկ է համարում հնարավորինս անորոշ պահել հարցը՝ իրո՞ք ԵՄ ենք գնում (էլ չասած՝ արդյոք մեզ հրատապ սպասո՞ւմ են ԵՄ-ում, որ միայն հանրաքվեն է մեզ պակաս), դո՞ւրս ենք գալիս ԵԱՏՄ-ից, թե՞ ոնց: Մանավանդ՝ հանրաքվե անում են այն պահին, երբ համարյա թե վճռել ես ինչ- որ քայլ, եւ ժողովրդի կարծիքն ես հարցնում՝ ստուգելու վճռիդ իրավացիությունը:

Տպավորություն է, որ աշնանն այնպիսի տեկտոնական բաներ կարող են լինել, որոնցից տեղյակ է իշխող մեծամասնությունը եւ աշխատում է այս կարգի հարցերն առայժմ անորոշ պահել:

Գերհագեցած աշնան նախանշան կարելի համարել նաեւ Հայաստանի Անվտանգության խորհրդի քարտուղար **Արմեն Գրիգորյան- ՌԴ ԱԳՆ** ներկայացուցիչ **Մարիա Զախարովա** վերջին սրացումը: Գրիգորյանն ասում էր՝ Ռուսաստանը վերցրել է Լեռնային Ղարաբաղն ու հանձնել Ադրբեջանին, Զախարովան՝ թե բա սեփական ժողովրդիդ ինչո՞ւ ես նեղացնում, որը կռվում էր սեփական տարածքների համար եւ մեռնում պատմական արդարության համար: Հա՞: Էս ի՞նչ է փոխվել, էլ Արցախն Ադրբեջանի տարածք չէ՞, ինչպես **Փաշինյանին** հետեւելով **Պուտինն** էր կարծում: Ռուսաստանն ինչ-որ նոր քայլեր ունի՞: Ինչի՞ց հետո:

Զուգահեռ եթե տեսնենք, թե վերջին օրերին ինչեր են հնչեցրել ամերիկացիք, որոնք այլեւս բաց են խոսում իրենց նպատակների մասին, շատ բան կարելի է ենթադրել: Նախկին Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ **Ուոլիքը** գովում է Փաշինյանին՝տարածքներն Ադրբեջանին վերադարձնելու համար, դա ճիշտ ուղի համարելով եւ բարձրաձայն երազելով՝ մնաց Սյունիքի միջանցքի հարցը լուծվի: Այս աստիճանի անհամբերություն:

Մյուս կողմից՝ ԱՄՆ պետքարտուղարի Եվրոպայի եւ Եվրասիայի գործերի գծով տեղակալ **Ջեյմս Օ՛Բրայենը** Ներկայացուցիչների պալատի միջազգային հարաբերությունների կոմիտեի լսումներում, Բաքու կատարելիք իր այցին անդրադարձ անելով՝ նշել է, թե Ալիեւին հասկացրել են, որ խաղաղության հաստատման, խաղաղության պայմանագրի կնքման ժամանակն է, եւ միաժամանակ, Ուոլիքի պես, էլի չի թաքցրել մոտիվը՝ ելք, շրջանցիկ ճանապարհ Ադրբեջանով, Հայաստանով եւ Թուրքիայով ԵՄ եւ ԱՄՆ համար, որպես այլընտրանք Ռուսաստանին եւ Չինաստանին: Ասինքն՝ Սյունիքով անցնող ճանապարհը ԵՄ, ԱՄՆ տնտեսական շահն է նախ, առաջ դա թաքցնում էին, սքողում դիվանագիտական բառակույտերի տակ, Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղութունը որպես գլխավոր նկարագրելով:

Եթե նայում ենք նույն համատեքստով նաեւ Հայաստանի ներսի քայլերը՝ թե մենք երրորդ երկրների համար պատրաստ ենք բացել հայ-թուրքական սահմանը (կարծես Հայաստանն է փակել), իսկ կառավարության նիստում էլ հրատապ հավանություն է տրվում ՎԶԵԲ բազմամիլիոնանոց վարկային համաձայնագրին՝Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի 4-րդ տրանշի Սիսիան-Քաջարան շուրջ 60 կմ նոր ճանապարհահատվածի (ներառյալ Բարգուշատի թունելը) ներդրումային ծրագրով, որով կառուցվելու է 24.25 կմ երկարությամբ ասֆալտբետոնե պատվածքով ճանապարհ՝ 5 թունելների, 11 կամուրջների, 68 հեղեղատների, 43 հենապատերի կառուցում,անվտանգ երթեւեկությունն ապահովող այլ աշխատանքների իրականացմամբ, ապա հասկանում ես ողջ շտապողականության համատեքստը՝ Սյունիքի միջանցքն է պետք Ռուսաստանն ու Չինաստանը շրջանցել ցանկացողներին, իսկ դե Ռուսաստանն էլ դա կիամարի իր նոր տնտեսական, ինչու չէ՝ նաեւ քաղաքական պարտությունը՝ փորձելով դա թույլ չտալ: Հայաստանն էլ այն ուժը չունի, որ ասի՝ իմ շահից ելեք բոլոր կողմերդ էլ, ու վերջ:

Ու աշնան հենց առաջին օրից ողջը նորից կսկսվի՝ նոր տարածքներ Հայաստանից Ադրբեջանին կտրել-տալու փորձեր՝ սահմանազատման անվան տակ, քանի որ հենց Ադրբեջանն է չեմուչում անում խաղաղության պայմանագրին, նոր պարտադրանքներ՝ անունը խաղաղություն, նոր ներքաղաքական լարումներ՝ նույն համատեքստում, փրկիչներով եւ առաքյալներով հանդերձ: Պատերազմի սպառնալիքն էլ վրադիր:

Գումարած Բաքվի բանտերում մեր գերիների ամոթը եւ հարակից այլ ամոթներ:

Իսկ մինչ այդ մեր փրկիչները, առաքյալները, նորաթուխ պետգործիչներն ու նրանց փոխկապակցվածները մի գերխնդիր ունեն՝ արեւահարվել Դուբայներում եւ Միջերկրականի ափերին:

# «Ձեր բանտարկյալներին չեն տանջում այնպես...

⇨1 **-Նրանք լավ վիճակում չեն, դուք էլ գիտեք: Ես չեմ կարող փաստերը ստուգել՝ տանջո՞ւմ են նրանց, թե՞ ոչ: Սակայն ինձ հետաքրքրում է, թե կոռումպացված ռեժիմի մասին խոսելիս, ձեր փաստարկները բարձրաձայնելիս ինչո՞ւ եք խուսափում ողջ ճշմարտությունը ներկայացնել: Վտանգավո՞ր է խոսել հայերի իրավունքների, ԼՂ-ի մասին: Դուք էլ գիտեք, որ ԼՂ-ն բնիկ հայկական տարածք է, մեր երկիրն է:**

-Կան ՄԱԿ-ի բանաձեւերը...

**-Մի խոսեք դրանց՝ ճշմարտությունից հեռու փաստերի մասին, փոխարենը հիշեք, որ Ալիեւը ցեղասպանություն է կատարել հայերի հանդեպ եւ շարունակում է այդ գործողությունները:**

-Ես այդպես չեմ կարծում...քանի որ չեմ հետաքննել նման փաստեր: Խոսում եմ միայն փաստերի վրա հիմնված իրողությունների մասին: Հետաքննել եմ լրագրողների հանդեպ կտտանքների փաստերը, գիրք եմ գրել, ինձ պատժել են դրա համար, բանտարկել, տանջել...

**- Չեմ կարող հավատալ, որ արդարության համար եք պայքարում, երբ «տեսակավորում եք» արդարությունը:**

-Նորից եմ կրկնում՝ չեմ հետաքննել: Այս մարդուն գիտեմ (ցույց է տալիս լուսանկարը-Ան. Հ.), լրագրող է, նրան բանտարկել են կոռուպցիոն գործարքներ բացահայտելու համար...

**-Ինչու՞ որեւէ հայ չկա Ադրբեջանում: Արդարությո՞ւն է:**

-Պատերազմի պատճառով:

**-Բնակա՞ն, նորմա՞լ եք համարում դա:**

-Իմ կարծիքով, կարող էր պատերազմից առաջ էլ խաղաղության պայմանագիր կնքվել, կամ նոյեմբերի 10-ից հետո, երբ համաձայնագիր կնքվեց 3-ի՝ Ադրբեջանի, Հայաստանի, Ռուսաստանի ստորագրությամբ...

**- Որ խախտեց Ալիեւը՝ հայկական նոր տարածքներ գրավելով:**

-Այո, ճիշտ է, բայց դա արդարացվեց, քանի որ Լաչինով զենք էր բերվում հայկական վերահսկողության տակ մնացած տարածքներ...

**-Կեղծիք է: Ադրբեջանը թշվառ վիճակի մեջ է, քանի որ կառավարությունը, իշխանությունը փոխում է, կեղծում պատմական փաստերը, ինչն առաջին հերթին Ադրբեջանի ժողովրդին է վնասում: Ատելությունը հայերի, հայ ժողովրդի եւ ձեր հանդեպ նույնը չէ անշուշտ, բայց՝ միեւնույն է՝ ատելություն է:**

-Մի օրինակ՝ ասենք Ֆրանսիան եւ Մեծ Բրիտանիան կռվում են: Մեծ Բրիտանիայի թագավորը Ֆրանսիայի ժողովրդի հանդեպ ատելութան խոսք է ուղղում, հետո էլ՝ իր ժողովրդի: Սեփական ժողովրդի հանդեպ ատելության խոսքն ավելի վատ է:

**-Ձեր համեմատությունն ընդունելի չէ ինձ համար: Այդուհանդերձ դառնանք արդարության մասին ձեր պատկերացումներին, երբ քննադատում եք ձեր նախագահին, ձեր կառավարությանը, հետո չե՞ք արդարացնում նրանց՝ ասելով, թե ազատագրել եք Լեռնային Ղարաբաղը: Յուրաքանչյուր ուսյալ մարդ գիտի, որ ԼՂ-ն, Արցախը հայկական տարածք է, էթնիկ հայկական է: Դուք էլ դա գիտեք, բայց չեք խոսում դրա մասին, եւ դա վտանգավոր է: Վտանգավոր է, երբ ընտրովի է ձեր արդարության պահանջը:**

(Հետո մեր զրույցը ծավալվեց Ադրբեջանի՝ որպես ինքնուրույն պետական միավորման, Իրանի նույնանուն տեղանվան յուրացման, Արցախի, Գետաշենի, Գարդմանի՝ հայկական բնիկներից զտման մասին: Երբ փաստերի հետ համաձայն չէր, ասում էր, թե շարադրանքիս մեջ կրթական դեֆիցիտ է նկատում):



Բոննում ադրբեջանցիների բողոքից

**-Ալիեւը քանդում է հայկական հետքը, հողին հավասարեցնում հայոց հուշարձանները, եկեղեցիները, ինչո՞ւ չեք խոսում սրա մասին:**

-Չեն քանդվել, Բաքվի կենտրոնում պահպանված են հայկական եկեղեցիները:

**-Միայն մեկը, որտեղ հոգեւորական չկա: Իսկ Արցախում քանդվող եկեղեցիների մասին չե՞ք լսել:**

-Ոչ: Ես չեմ տեսել: Բայց տեսել եմ պատերազմից հետո քանդված մզկիթներ: Սակայն կարծիքս հետեւյալն է՝ ո՛չ սինագոգ, ո՛չ մզկիթ, ո՛չ էլ եկեղեցի չպետք է քանդել:

**-Քանդվում են միայն հայոց եկեղեցիները, քանի որ դրանք մեր՝ 4-րդ դարից ի վեր Արցախում հայոց ներկայության հետքն են: Ստեփանակերտում, Շուշիում ամփոփված պատերազմի զոհերի շիրիմներն են քանդում: Դուք դա նորմա՞լ եք համարում:**

-Այդպիսի տեղեկություն չունեմ, բայց գերեզմանները չպիտի քանդել:

**-Կարո՞ղ է խաղաղություն հաստատվել հայերի եւ ադրբեջանցիների միջեւ, երբ վերջինները քանդում են մեր եկեղեցիները, գերեզմանները:**

-Ես հավատում եմ: Միայն թե հայ ժողովուրդը պիտի ընտրի՝ անցյա՞լն է կարեւոր իր համար, թե՞ ապագան: ԵԽԽՎ-ում ներկա էի եւ անգլերենից ադրբեջաներեն էի թարգմանում **Փաշինյանի** ելույթը, իմ եզրակացությունը հետեւյալն է՝ Փաշինյանի հայացքն ուղղված է ապագային:

**-Կարո՞ղ է որեւէ ժողովուրդ, ազգ առանց անցյալի կենդանի լինել: Միգուցե Ադրբեջանի պարագայում դա հնարավոր է, քանի որ երկար ընթացք չի ունեցել, բայց բոլոր ժողովուրդների, ազգերի ներկան անցյալի շարունակությունն է, իսկ ապագան չի գալիս՝ առանց անցյալի ճանաչման: Լսո՞ւմ, կարդո՞ւմ եք ձեր նախագահի ամենօրյա ատելավառ ելույթները Հայաստանի հասցեին:**

- Կարծում եմ Փաշինյանը լավ բան է անում տարածաշրջանում խաղաղություն հաստատելու տեսակետից, Ալիեւը պիտի հետեւի նրա օրինակին:

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԼԳ տարի
Հրատարակիչ
**«ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ» սոցիալ-մշակութային հիմնադրամ**
Երեւան, Սայաթ-Նովա 21Ա,
Տարածք 48, Երեւան 0001
**e-mail:** info@azg.am
azgdaily@gmail.com
**www.azg.am**
*Գլխաւոր խմբագիր* ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ
*Հաշվապահութիւն (գովազդ)*
հեռ. **010 582960**
*Համակարգչային շարուածքը*՝ «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Վահան Թեքեյան» սոցիալ-մշակութային հիմնադրամ», Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001: Պետական գրանցման վկայականի համարը՝ 286.110.1041780, տրուած՝ 25.10.2018 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 27.06.2024, գինը՝ 200 դրամ, տպագրւում է «Գինդ» տպարան ՍՊԸ, ք. Երեւան, Բագրատունեաց 70ա: